



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԵԱԼՈՒՅՑՍ ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՈՒՂԻՆԵՐ



891-99

S-44

★ 1932 ★ ՅԵՐԵՎԱՆ

ԽՍՀՄ ԳԱՐԱ

26 NOV 2011

ԱՐՁԱՂՈՅԱ ՏԵՐ-ՀՈՎԱՆԻՍՅԱՆ

891-99

75-44

Կ

Ա Բ Դ Ի Ւ Ե Ը

2 1 2

1032
46

Գիւղ 5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ



ԳԵՂՋԱՑ
Ա. ՄԱՆՈՒԿԻՐ
ԱՅԱՍԻՎԱՅՐ

ՅԵՐԵՎԱՆ

20.08.2013

58418

ՊԵՏՐՈՎԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՄԱՐԱԿ. № 1780
ԳԼԱՎԼԻՏ 6708(բ)
ՊԱՏՎԵՐ և 4311
ՏԻՐԱԺ 2000

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. Հայկուշ, —կոմյերիտաւիի.
 2. Գարիգ, —կոմյերիտական.
 3. Շմո, —կոմյերիտական.
 4. Ռուբիկ.
 5. Վահագ,
 6. Պերճ.
 7. Սիրան.
 8. Լիլիկ.
 9. Անիկ.
 10. Արամ.
 11. Եղիկ.
 12. Վաչիկ.
 13. Սոնիկ.
 14. Սիմոն թիժա, —դպրոցի հավաքարարը.
 15. Արտազյան, —դասախու.
 16. Զալյան, —դասախու, կոմունիստ.
 17. Սոլոմոն Բոգդանիչ Վարազյան, —Ռուբիկի հայրը,
45 տարեկան.
 18. Տիկիմ Առողիկ Վարազյան, —Ռուբիկի մայրը, 40
տարեկան.
 19. Տիկիմ Մարտիսյա, —Վարազյանների եղբեկան-
ին, 30 տարեկան:
- Տեխնիկումի մեծա-
հասակ աշակերտ-
ներ:*

20. Սագիմով իոսիփ Արկադիչ, —հաշվապահ, 50 տարեկան, ամուրի: Հազմում և վիզիտկա հիշեցնող հագուստ և ծածկում փափուկ շլյապա:
21. Կոմյերիտբյուրոյի առաջին անդամ: Աշակերտ:
22. Կոմյերիտբյուրոյի յերկրորդ անդամ: Աշակերտ:

Աշակերտներ.
Աշակերտաւիճեր.
Դասատուներ:

Գործողությունը կատարվում է մեր որերում,
օմեր ժամանակ:

Ա. Ռ Ա. Զ Ի Ն

Տեխնիկումի գլխավոր մուտքը ներսի կողմից, վորի միջին մասից դեպի վեր, դեպի յերկրորդ հարկ բարձրանում եւ լայն սանդրուխք, կիսում փոքրիկ երապարակ և կազմում, ապա վոլորվում է աջ ու ձախ դեպի վեր: Յերկրորդ հարկում նյութավորված ստեղուխքը միանալով, կրկին կազմում է դեպի դուրս ընկած մի նոր, նաղապատ երապարակ: Վերեկի երապարակը կիսով կախված է ներքեվից բարձրացող լայն սանդրուխքի վրա:

Առաջին երապարակում, ուր աստիճանները բաժանվում են յերկուսի, դիմացի պատից կախված և աշակերտական «կադրեր» պատի լրագիրը, զանազան հոդվածներով ու ծաղրանկարներով:

Ներքելում, սանդուխքի աջ կողմը, դեպի միջանցք ձգվող պատից կախված են «Աշխորիբդի» և «Մոպրի» հայտարարությունների տախտակները, . զանազան հայտարարություններով:

Վարագույրը բարձրանալիս դպրոցի հավաքարար ՍիՄՈՆ ԲԻՉԵՆ մերժեվից կամաց-կամաց վերև բարձրանալով, հատակի

խոզանակով մաքրում և աստիճանները,
քրքմնչալով ինքն իրեն:

ՍԻՄՈՆ ԲԻՉԱԼ. — Զի՞ ըլում, ախալեր, չի՞ ըլում, ելի՞ ...
Որը քսան անգամ ել վոր մա՛քրես, ե՛լի են ցե-
խը, ե՛լի են կեղտը ... Հաղպար ասում եմ, տը-
ղերք, խիղճ ունեցեք, հրեն ընտեղ ահագին
ճլուզ ա քցած, նրանից վերեվ ել հրեն
են զաղը ... են վո՞նց ա ե... ե՞ն ելի, են վոր
պրոպկից ա շինած ... Դուք ասեք ե... են ե՛լի,
են զաղը ... Ասում եմ ախոր ահագին մարդ եք,
կարդին դաղափարի տեղ ... վոր ներս եք դալի,
դե են ա առաջ վոտներդ պինդ-պինդ քուք ճլո-
պին, հետո յել ... են զաղին .. նոր հետո դա-
սարան մտեք: Բայց դե ասած կամ չասած, մի
հաշիվ ա ... (Հիշալություններով տարված,
անգիստակցաբար դպրառում ե. մաքրել ու կանգ
ե առնելու սահելուխի մեջ տեղ) Առաջ ժամա-
նակ մի տեսնելի՞ք .. Դուան չեմքից բոնած մին-
չև դասարանները չողքի նման պայծառ փայլ
եր տալիս, պատկերդ մեջը պլազմամ եր ... ես
սանդուխքներն ինչա, ես սանդուխքների վրա
յել եսպես բոյե-բոյ կանաչ դարոժկա յեր փը-
ռած ... Թողն լի՞նչն ա, թո՞վ ել չկար, ո՞ւր մը-
նաց թե ցեխ ... Աշակերտներն ել բոլորը մի
ֆորմ հաղած, սալող-կալոչով, թառ ու թա-
մուռ: Վոր շարք եյին կանգնում դասարան գը-
նալու, դիրեկտորը գալիս եր, մեկ-մեկ մտիկ
եր տալիս ու վայա թե մեկը մի պակասու-
թյուն եր ունեցել ... են սհաթին տուն եր ու-
ղարկում, թե մինչեվ չորդ ես Փորմին չինի,

յա կամ սալող-կալոշ չունենամ, ել դպրոց չը-
գաս: Ինչքան աղաչանք-պաղտուանք, —պարոն
դիրեկտոր, հերս քյասիք մարդ ա, հազիկ
տունն ա յոլա տանում, առնելու միջոց չու-
նի, —վոչ մի ոգուտ չեր անում: Զե՛ վոր չե,
չի՞ ըլի, թե վոր առնել չի կարա, ուրեմն սո-
վորելը քու բանը չի ... (դադար) Եղ ել մի
խիղճ չեր ... Դե վոր հնարավորություն եր ու-
նեցել, ենա կառներ ելի ... Եղ վո՞ր հերն ա,
վոր միջոց ունի ու իրա երեխին գուրկի կպա-
հի ... (Դադար) Շատ խիստ մարդ եր ... (Թա-
փահարում ե ծեր գուլը և շարունակում ե
մաքրել աստիճանները) Հե՛յ դիտի հա՛, քու
մե՛րը չմեռնի աշխարհ, վո՞նց չուռ յեկար ...
Ես ինչ կերպարանք առար ...

Գալիս ե, ՌՈՒԲԻՒԿԻԾ, թեվի տակ թղթա-
պանակ: Կանգնում ե մի պահ ցածում, ժը-
պիտով նայում ե Սիմոն բիձին, ապա բար-
ձրանում ե աստիճաններով :

ՌՈՒԲԻԿԻԿ. — Սիմոն բիծա, ե՞լի հին բաներից ես միտ
բերել:

ՍԻՄՈՆ ԲԻՉԱԼ. — (Խիստ նայում ե նրա վաստերին) Բա
ո՞վ ա իմացել, վոր հենց եղ տեսակ ցեխաթա-
թախ վոտներով վերե ես քըշըմ: Բա են զա-
դը ... են իսի՞յա քցած ընտեղ ... Աշխարքի
փող ա տված ...

ՌՈՒԲԻԿԻԿ. — (Նայում ե իր վաստերին) Ներողություն,
Սիմոն բիծա, մոռացա: (Խնօսում ե ցած, սկսում
ե մաքրել վաստերը):

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — (Քրքմնցում ե) Ներողությունն...
Հարկավոր ասապող-կալոշ հագնել:
ՌՈՒԲԻԿ. — Դժվար ժամանակ ե, Սիմոն բիծա, հնդամ-
յակ ե, հետո լավ կլինի, բոլորս ել քո առած
սապող-կալոշով կլինենք: Մի նեղացիր:
ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Չեմ նեղանում, բայց դե թամզու-
թյունը լավ բան ա: Մի առաջ ժամանակ տես-
նելիք...
ՌՈՒԲԻԿ. — Կսովորենք, Սիմոն բիծա, մենք ել կսովո-
րենք: Դու դեռ համբերիր, տես առաջվանից
ինչքան լավ կլինի: Թող մի սոցիալիզմը կս-
ուցիի:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Ե՛, աշխարհը փոխվեց... ենենց փոխ-
վեց, վոր յես բան չեմ հասկանում:
ՌՈՒԲԻԿ. — Աշխարհը լավացել է, Սիմոն բիծա, դու ա-
մենևն դարդ մի արա:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Մեկ-մեկ յես ել եմ եղակու միտք ա-
նում: Այ, հիմի մեր են նաչար Սերոբի տղեն
ել սովորում ա, կարգին ուսում ա առնում, ե-
գուցելոր հորը ողնական կլինի: Առաջ ժա-
մանակ, իմ իմանալով, նա ուսումի երեսն ել
դժվար թե տեսներ... Եղ մեկը շատ լավ ա,
վորդի, հավանում եմ: Խեղճ հոր մեջքը կո-
տրվեց բեռ կը ելով:

ՌՈՒԲԻԿ. — Այ, տեսնում ես, իհարկե հիմի լավ ե:
ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Բայց դե թամզությունը ելի հարկա-
վոր ա:

ՌՈՒԲԻԿ. — Իհարկե, մաքրությունը անհրաժեշտ ի:
Մաքրությունը սոցիալիզմի համար շատ հար-
կավոր բան ե: Շատ կա զանդը տալուն, Սի-
մոն բիծա:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Զի, հիմի ուր վոր ա, կտա: Ելի ընչե՞
յես ուշացիլ:
ՌՈՒԲԻԿ. — ՄՈՊՐ-ի բյուրոյում գործ ունեյի: Թույլ-
տվություն վերցրել, նոր եմ զնացել:
Ռուբիկն աստիճաններով բարձրանում ե
վերի:
Յերկարանկ հնչում ե դասամիջոցի զան-
գը: Սիմոն բիան դադարում ե մաքրել և դան-
դադ իշնում ե:
Ամեն կողմից, քե առաջին հարկում, քե
յերկրորդ հարկում, աղմուկով դուրս են քափ-
վում աշակերտ-աշակերտուիները, անցնում
են դասասուներ, ձեռքերին գրքեր: Վերկից
իշնող մի աշակերտ հեծնում ե սանրուղիի թե-
վին ու սահում ե ցած, ուրախ քրիզով: Մեկ
ուրիշը քափով ցած ե վազում սանդուղքով և
կպչում ե Սիմոն բիային, սակայն տառեց ու-
շագրություն դարձնելու օրան, շարունակում
ե ցած նետվել:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — (Կանգ ե տնօւմ, մի պահ զպայնացած
հայում ե վագող աշակերտի յետևից) Բա դե ա-
ռաջ ո՞վ եր իմացել ես տեսակ անկարգ բան...
(Իշնում ե և անցնում ներքինի միշանցի կող-
մը):

Մի խումբ աշակերտներ՝ Ա.ՐԱՄԸ, ԵԳԻ-
ԿԸ, ՍՈՒԻԿՆ ՈՒ Վ.Ջ.ԶԼԿԸ հավաքում են
աստիճանների վերեկի հրապարակում:

ԱՐԱՄԸ. — Ես տրակառիքստ եմ դասնալու... Անպա՛տ-
ճառ... Մատորը վոր եսպես դռւացնում ե ու
հանկարծ տեղից պոկիում, վազ ե տալիս փա-
փուկ հողի միջով... (Պատկերացնում ե տրակ-

տուրի վազքը) Առողիոր ակոսներ և բաց առ
նում... Շատ լավ ե... Մարդ ուզում և Ֆի
գլուխ հենց քշի ու քշի...

ՎԱԶԻԿ.—Դու վի՞րտեղից գիտես:

ԱՐԱՄ.—Մեր գյուղի կոլխոզում տեսա:

ՍՈՒԻԿ.—Տեսա՞ր:

ԱՐԱՄ.—(Արհամարհական) Տեսա՞ր... (Հպարտ) Նըս-
տե՛լ եմ, նստե՛լ... Տրակտորիստը հետը վեր-
ցրեց: Լա՛վ եր: Անպա՛յման տրակտորիստ եմ
դառնալու:

ՍՈՒԻԿ.—Ի՞նչ լավ ե...

ԵԴԻԿ.—Չե՛, ախտեր, յես հրամանատար եմ դառնա-
լու... Կարմիր հրամանատար... Սուրս կը ա-
չեմ, քյոհլան ձիս կմտրակեմ ու... ընկերնե՛ր,
առա՞ջ, իմ յետեկից... վրա՛ տանք թշնա-
մուն... (Պատկերացնում ե այդ ամենը, ճեռ-
քը բռունից շինած քափակելով ողում աջ
ու ձախ):

ՎԱԶԻԿ.—Իսկ յես դործարան եմ գնալու... Գյուտա-
րար եմ դառնալու...

Վաչիկը վոգեվորված պատմում ե,
մյուսները լուս են ուշադիր:

Ցածից առաջին իրավարակ են բարձրա-
նում յերկու աշակերտուհի՝ ԱՆԻԿԻ և ԼԻ-
ԼԻԿԻ: Նրանք կանգ են առնում պատի լրա-
գրի մոտ:

ԼԻԼԻԿ.—Անիկ, «Նայիրի» գնացե՞լ ես:

ԱՆԻԿԻ.—Չե, Լիլիկ, չեմ յեղել: Ի՞նչ են ցույց տալիս:

ԼԻԼԻԿ.—«Կարյետոե»:

ԱՆԻԿԻ.—Հետաքրքի՞ր նկար ե:

ԼԻԼԻԿ.—Չափաղանց: Յանինդսն ե խաղում:

ԱՆԻԿ.—Դերասանուհին ո՞վ ե:

ԼԻԼԻԿ.—Լիա դը Պուտին: Այնպես հրաշալի հագուստ-
ներ ունի, այնպե՞ս հրաշալի, վոր ասել չեմ
կարող: Լույսերի տակ ամբողջապես շողշո-
ղում ե... Մինչև այստեղ դեկոլտե... Դոլոր-
ցը վոր ավարտեցի, յես ինձ համար անպատ-
ճառ այդպիսի հագուստ եմ կարել տալու:

ԱՆԻԿ.—Ե՛, դու յել... Այն ժամանակ ո՞վ գիտե ինչ
մոդա լինի: Զես տեսնո՞ւմ ինչպես հիմի յեր-
կար են հազնում. իսկ առաջ ինչքան կարձ եր,
ծնկներից ել վեր:

ԼԻԼԻԿ.—Ճիշտ ես ասում, բայց այնքա՞ն սիրուն ե...
այնքա՞ն սիրուն...

ԱՆԻԿ.—Այսոր անպայման կդնամ տեսնեմ: Յես գնա-
ցել եյի «Պրոլետար»: Զզվեցի: Գյուղի կյան-
քից եր: Կոլխոզ եյին հիմնում, թե կամուրջ
եյին շինում,—լավ չէասկացա: Անհետաքրքիր
եր: Մինչև վերջը չմնացինք: Դուրս յեկանք,
դնացինք «Տուրիստ»: Դանիկն եր հետո:

Չարտնակելով խոսակցությունը, նը-
րանիք բարձրանում են վերև:

Վերիկից իշխում ե ՎԱԶԻԿԻ: Նա մի պահ
կանգ ե առնում պատի լրազրի առաջ, խո-
ժոռ նայում ե, ապա շարունակում ե իցել:

Ներքինց բարձրանում ե ՊԵՐՃԸ: Վա-
հազր բնեում ե նրա քեից ու աչքով անե-
լով, տանում ե իր հետ: Նրանիք լուս իշխում
են, անցնում են աջ կողմ, պատի տակ, հայ-
տարարությունների տախտակի մոտ:

Թուվոապեն իշնում և ՍիրԱՆՅԻ: Վահագը
նկատելով նրան, ձեռքով և անում: Սիրան
շտափ իշնում եւ և միանում եւ նրանց:

ՎԱՀԱԳ.—(Չորս կողմը նայելով, զգույշ և կամացակ,
վորպեսզի այդ բռպեյին նրանց մոտով անց-
մոդ-դարձող աշակերտ-աշակերտուիիները ըր-
լանի իրեն) Հոգվածը գրել եւ Ռուբիկը:

ՍԻՐԱՆ.—Ռուբիկը: Այդ ի՞նչպես իմացար:

ՎԱՀԱԳ.—Դա կարեսոր չե:

ՊԵՐՃ.—Քծնում ե: Ուզում ե հաճոյանալ:

ՎԱՀԱԳ.—Ճիշտ ե: Դիմում և ավել կոմյերիստիու-
թյան մեջ ընդունվելու:

ՍԻՐԱՆ.—Նրանից սպասելի յե, իսկական խոզ ե:

ՎԱՀԱԳ.—Միալ ես, նա շատ խելոք տղա յե:

ՍԻՐԱՆ.—Խելոք... Անքաղաքավարի' յե, մարդու
հետ խոսելիս իրեն պահել չգիտե: Զեմ սի-
րում նրան:

ՊԵՐՃ.—(Ծիծաղում ե) Հը°, դադվել ես:

ՍԻՐԱՆ.—Հիմար բաներ մի ասա: Յես նրա վրա չեմ ել
թքի:

ՊԵՐՃ.—Վաղո՞ւց ե:

ՎԱՀԱԳ.—Թողեք: Յեթե հարցը միայն Ռուբիկին վե-
րաբերել, թքած, մեզ ինչ, ինչ ուզում ե, ա-
նի: Բայց ուրիշ բան կա:

ՊԵՐՃ.—(Միասին) Ի՞նչ:

ՍԻՐԱՆ.—Կասկած դու յել... Մի լակոտի պատճառ՞վ:
ՊԵՐՃ.—Սիրան, դու վոչինչ չեն հասկանում: Յեթե
քննություն կատարեն, իսկապես շատ բան

կարող ե պարզվել: Արտազյանն իր դասերում
շատ հակառակ բաներ ե անցկացնում:

ՎԱՀԱԳ.—Այս: Կարող են հեռացնել: Աշխորհուրդը,
իհարկե կոմյերիստիուրոյի թելադրանքով,
արդեն սկսել ե խառնվել գործին:

ՊԵՐՃ.—Վահագ, դա լավ չե, յեթե Արտազյանին հեռ
ուացնեն, մեր բանը վատ ե: Ով գիտի ում
նշանակեն նրա տեղ... Առաջադրություններին
կկորպենք... Անկասկած կկորպենք: Յես վոր
վոչինչ չեմ արել: Վոչինչ չգիտեմ համարյա:

ՎԱՀԱԳ.—Յես ել քեզ նման: Զեմ սիրում:

ՍԻՐԱՆ.—Ուժի: ինչ զգվելի տղա յե եղ Ռուբիկը...
իսկ յես վոչինչ չեմ հասկացել:

ՊԵՐՃ.—Վահագ, հարկավոր ե առաջն առնել:

ՎԱՀԱԳ.—Մյուս կողմից ել մեր սոցիալական ծագման
հարցը կա: Առանց այն ել մեր գրությունն
այնքան ել ապահով չե... իսկ յեթե առաջա-
գրություններին ել կորպեցինք, —վերջա-
ցած ե:

ՊԵՐՃ.—Վահագ, մի բան պիտի անել... Դու հասկա-
նո՞ւմ ես, թե դա ի՞նչ ե նշանակում: —սոցիա-
լակես անհարադար տարր...

ՎԱՀԱԳ.—Հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում:
Զգետք ե թույլ տալ գործը մինչև քննություն
հասնի: Հարկավոր ե մտքերը չփոթել, բայց
թե ինչպես, —այդ բանն ե, վոր չեմ կարողա-
նում մտածել:

ՍԻՐԱՆ.—Յես կթքեմ նրա յերեսին... Նա ամենելին
հպարտություն չունի... Սրանք նրա հորն են
որին են դցել, իսկ ինքը...

ՎԱՀԱԳ.—(Խիստ հետաքրքրված, ընդհատում ե) Ի՞նչ:

ՍԵՐԱՆ — Պաշտօնից հս գցել են, տներն ել ձեռքից առան, հիմի մի հասարակ կործավար ե:

ՎԱՀԱԳԻ — Սպասիր, սպասիր, ասում ես Հո՞ւփի են տվել, հա՞:

ՊԵՐՁ — Ճիշտ ե, յես ել եմ լսել:

ՄԻՐԱՆ — Մեր հարևանն ե, յես լով եմ իրանում: Մայրը շարունակ ախուց վախ ե անում:

ՎԱՀԱԳԻ — Այդպես... (Մտածում ե, համկարծ մի բան կոահենով) Հը՞..., դա լով ե... կարծես կարելի յե... Դուքս կդա... Այո, կարելի յե... Միայն հարկավոր ե չատ խելացի գործ բռնել...

ՊԵՐՁ — Ի՞նչ:

ՎԱՀԱԳԻ — Վոչինչ, առայժմ վոչինչ: Պերձ, յերեկոյան անցիր ինձ մոտ: Տես, չմոռանաս, անպայման կդաս:

ՊԵՐՁ — Կդամ: Գլխի յեմ ընկնում: Միայն հարկավոր ե լուրջ մտածել, թե չե...

Նրանց ե մոտենում ԾՈՂՆ, բուլկի կըրծելով:

ԾՄՈ — Մտածեցեք, մտածեցեք, գուցե գլխկոնծի տաք:

ՎԱՀԱԳԻ — Կորի՛, խեղկատակ:

ԾՄՈ — Միավեցիր. պատիվ ունեմ ներկայանակ. — ուղղիո-ընդունիչ:

ՊԵՐՁ — Մաղիր շպիռն:

ՎԱՀԱԳԻ — Ամեն բանի մեջ քիթ մի խոթիր:

ԾՄՈ — Այդպես: Նշանակում ե, վախենո՞ւմ եք, զորձեր հոտը ուրիշ քթին կառնի:

ՎԱՀԱԳԻ — Քո քիթը սովոր ե զոմի հոտին... Կորի՛, ասում եմ, թե չե կջարդեմ:

ԾՄՈ — (Ուրախ պտույտ ե գալիս մի վատէի վրա) Դասակարեք դասակարդի դեմ: Հուրը բորբոք

վում ե: Հնչում են չեփորները: Զիերի դո-
փունը ցնցում ե վողջ աշխարհը...

ՄԻՐԱՆ — Ի՞նչ եք դլուխ դնում չորանի հետ: Գնանք: Սիրան առաջ ե անցնում, բարձրանա-
լով սանդուղքներով: Վահագը և Պերձը ուր-
համարհական մի հայացք նետելով Շմոյի
վրա, հետևում են Սիրանին:

ԾՄՈ — Քաջարի նահանջ, յուրկայի պաշտպանությամբ:

ՄԻՐԱՆ — (Աստիճանների վրայից յետ նայելով) Անամո՛թ:

ԾՄՈ — Բնդունում եմ, վորպես վարձատրություն պարզախոսության:

Շմոն, նայելով բարձրացակ խերի յեսենից, սուլում ե ուրախ մի յեղանակ և ձեռ-
քերը գրպանները դրած, տարութերկում ե վոտքերի վրա յետ ու առաջ:

Վահագը և Պերձը առաջ են անցնում: Սիրան արհամարհական մի ժեստ նետելով դեպի Շմոն, հետևում ե նրանց:

Այդ ժամանակ վերևից իջնում ե ՌՈՒ-
ԲԻԿԸ: Վահագը և Պերձը վրիժառու հա-
յացք նետելով նրա կողմը, առաջ են անց-
նում ու կանգ տանելով վերևի հրապարա-
կում, հետաքրությամբ նայում են դեպի
ցած, ուր Սիրանը, տեսնելով Ռուրիկին
սկզբում ուզում ե լուր անցնել, սակայն փո-
խում ե մտադրությունը և զնում ե ուղիղ
նրա դեմ հանդիման:

ՄԻՐԱՆ — Շատ ես կոռոզացել, մարդու չես ուզում
տեսնել:

ԱՌԻԲԻԿ.—ՅԵ՞ս... Սխալվում ես, Սիրան:

ՃՄՈ.—(Ներքինից դասմալով դեպի նրանց) Սոխակ ու
վարդ... Լուսնյակ գիշեր... Զգուշչ, ընկեր
Բութիկ: (Փալսչում է):

ՍԻՐԱՆ.—Սրիկա:

ԱՌԻԲԻԿ.—Ինչո՞ւ յես հայոցում, նա լավ տղա յի:
Սիրում ե կատակ անել:

ՍԻՐԱՆ.—Պաշտպանո՞ւմ ես: Նրանք քեզ համար ավելի
լավ են, քան յե՞ս, այնպես չե՞:

ԱՌԻԲԻԿ.—Ովքե՞ր նրանք: Մենք բոլորս ընկերուր
ենք:

ՍԻՐԱՆ.—Վո՞չ, նրանք ինձ ընկեր չեն կարող լինել:

ԱՌԻԲԻԿ.—Ինչո՞ւ: Կոմյերիտականները լուրջ և պատ-
րաստված տղաներ են: Հենց մեկն ինքը Շմոն:
Հիշո՞ւմ ես, յերբ նրան պոաջին անդամ մեղ

հետ նստացրին: Ի՞նչ զիտեր: Խոկ այժմ տեխ-
նիկումի ամենալավ սովորողներից մեկը նա յի:

ՍԻՐԱՆ.—Նրանք անքաղաքավարի և կոպիտ մարդիկ են
բոլորն ել:

ԱՌԻԲԻԿ.—Այո, նրանք մի փոքր անդուսպ են, բայց
դա արդյունք ե նրանց անկեղծ և անմիջական
բնավորության:

ՍԻՐԱՆ.—Պաշտպանիր, պաշտպանիր... Կոմյերիտա-
կաննե՞ր... Անրարտավան ու գոեհիկ խու-
ժաննե՞ր...

ԱՌԻԲԻԿ.—ՀայՀոյելու փոխարեն ավելի լավ ե նրան-
ցից որինակ վերցնել:

ՍԻՐԱՆ.—Յերեկ շա՞տ ես ուզում նրանց դուք դալ:

ԱՌԻԲԻԿ.—Դո՞ւք զալ... Ինչո՞ւ դուք դալ:

ՍԻՐԱՆ.—Վոր քեզ ել իրենց մեջ ընդունեն:

ԱՌԻԲԻԿ.—Այո, կուզենայի նրանց հետ լինել:

ՍԻՐԱՆ.—Յերեկ այդ նպատակով ել զրել ես հոգվածը:
ԱՌԻԲԻԿ.—Հոգվածը: Քեզ ո՞վ ասաց, վոր յես եմ
գրել:

ՍԻՐԱՆ.—Ժիտո՞ւմ ես:

ԱՌԻԲԻԿ.—Դե վոր զիտես, այլևս կարիք չկա թագանե-
լու: Մի՞թե ճիշտ չեմ գրել:

ՍԻՐԱՆ.—Բայց չե՞ վոր քո պատճառով կարող են ըն-
կեր Արտազյանին դպրոցից հեռացնել: Նրանք
շարունակ առիթ են փնտրում:


ԱՌԻԲԻԿ.—Իմ պատճառով: Ինչո՞ւ. իմ պատճառով:
Յեթե Արտազյանը չի կարող անում համկանալ
և չի ուզում ընդունել նոր ժամանակն, ապա
շատ պարզ ե, վոր դպրոցը նրա տեղը լինել չի
կարող:

ՍԻՐԱՆ.—Զինի՞ դու ավելի յես հասկանում, քան ըն-
կեր Արտազյանը, վորի աշակերտն ես ինքդ:

ԱՌԻԲԻԿ.—Իսկ ինչո՞ւ յես յենթադրում, վոր այլպես
լինել չի կարող: Արտազյանը հին ժամանակի
մարդ ե, նա դաստիարակվել ու մեծացել ե
հին զաղափարներով: Բայց նա խելոք ու պատ-
րաստված մարդ ե, կարող ե պատճական այս
մեծ գեղքերից համապատասխան յեղբակացու-
թյուններ անել: Սակայն նրա սոցիալիստական
հասկացողությունները շարունակում են կառ-
չած մնալ եվլյուցիայի թեորիային: Նա որ-
գանապես կապված է այդ թեորիայի հետ և
ինչպես յերեւում ե, նրանց միմիանցից բաժա-
նել անհնարին ե:

ՍԻՐԱՆ.—Բառ՝ վոր... բոա՝ վոր... Կատարյալ մարք-
ուիստ-լենինիստ...

ԱՌԻԲԻԿ.—Ծագրությունը կատարված է մասնակի կողմէ:



մեր միջավայրում, այդքանը հասկանալ:

Մարդկության փրկությունը...

ՍիրԱՆ — (Սաստիկ ջղայնացած նրա լուրջ տռնից)

Մարդկության, թե քո հոր փրկությունը:

ՌՈՒԲԻԿ — ի՞նչ:

ՍիրԱՆ — Մեղ հիմարների տեղ մի դիր: Հասկանում
ենք, թե ինչու յես այդչափ մոտիկ-մոտիկ
անում նրանց, ինչու յես ուզում նրանց շար-
քերն ընդունվել:

ՌՈՒԲԻԿ — (Այլայլված) ինչու, Սիրան:

ՍիրԱՆ — Դա մի միջոց ե քո կողմից, վորպեսզի կա-
րողանաս ապահովել քո հոր...

Վահագը և Պերճը, վոր այդ ամբողջ
ժամանակ կախված վերիի հրապարակի հա-
ղերից, ուշադիր հետևում են նրանց խոսակ-
ցուրյան, անհանգիստ շարժումներ են ա-
նում և բարձրածայն հազում են, Սիրանի
ուշադրությունը զրավելու: Հազի ձայնից
Սիրանն սքափկում է, հասկանալով, վոր
շատ հեռուն է զնացել: Նայում է վերի ու
նրանց նշանակալից հայացքների տակ, զրա-
պում է իրեն:

ՍիրԱՆ — (Քրքշում է) Հա՛, Հա՛, Հա՛... Ակու-
ղի՛սս... (Շտապ անցնում է առաջ և վագե-
լով, վերև բարձրանում):

ՌՈՒԲԻԿ — (Մի ակնքարք կորցնում է իրեն, շփոր-
փում է, ապա քայլ է անում դեպի նա) Սպա-
սիր, Սիրան...

Վագ է տալիս նրա յետից, բայց հա-
յացքը համդիպում է վերևում անզուսպ հրա-
հեռացող վահագին և Պերճին, վորոնց այդ

ժամանակ միանում է նաև Սիրանը: Ռուբի-
կը խայբվածի պես կանգ է առնում, շուր է
գալիս ու դանդաղ իշնում է ցած, կանգ է
առնում պատի լրագրի առաջ, նայում է մի
պահ:

ՌՈՒԲԻԿ — ի՞նչ ասաց... Միջո՞ց... ի՞նչ միջոց...
Զեմ հասկանում... Ինչպէ՞ս կարելի յե այդ-
պէս բաներ մտածել իմ մասին... Յե՞ս (Գա-
դար): Նու, հիմարություն ե... Ասաց առանց
մտածելու... Յերեկ շատ և բարկացել, վոր
յերեկ չսպասեցի միասին տուն գնայինք...
(Քայլ է անում առաջ, իշնելու աստիճաննե-
րից բայց հանկարծ, կարծես ուժգին հարվա-
ծից ցնցված, կանգ է առնում մեխվածի պես)
Իսկ յեթե նրանք ել այդպես մտածեն... իմ
մասին...

ՎԱՐՍԴՈՒՅՑ

ՅԵՐԿՐՈՐԴ

Սանդուղքների վերեվի հրապարակում: ԳԱՐԻԳԻ կանգնած և հրապարակում կարծեք անրոշ վիճակում և խռութ և ինքնն իրեն:

ԳԱՐԻԳ.—Միշտ այսպես ե... լավ-լավ վարուժումներ կանեն, մեծ-մեծ ծրագրեր կեազմեն, բայց հենց զործը կատարելուն հասնի, ամեն մեկը մի պատճառ կրերի ու մի կողմ կըաշվի: Դե արի ու մենակ թող հողիդ դուրս գա: Զե՛, այս տեսակ անխիղմ բան չի կարելի: Ընկեր Զալյանն ել այստեղ և զնացել: Վերցրին նրան ել բամբակացանի կամպանիային ուղարկեցին: Ո՞վ ե իմանում յերբ վերադառնա: Առաջադրու թյուններն ել մյուս կողմից են վրա տալիս: Կարծես չեն կարող մի վոքր սպասել... չեն տեսնում, վոր ահազին զործ ունենք, ժամանակ ասված բանը չկա... Ե՛հ, յես ել ինչ եմ հիմար-հիմար բաներ խոսում: Գործ ե, պետք ե արվի: Ով ուզում ե, լինի: Բայց վե լավ քըրտընելու յեմ: (Նկատում ե հեռվից անցնող Ռուբիկին: Զայն ե տալիս) Ռուբիկ, Ռուբիկ, մի այստեղ արի:

ՌՈՒԲԻԿ.—(Մոտենում ե նրան) Հը՞ , ի՞նչ կա:

ԳԱՐԻԳ.—Պատրաստվիր, զեկուցելու յետ հակալունական յերեկութին:

ԻՌԻԲԻԿ.—Գարիգ, աստված վկա, ժամանակ չկա: Մոպրի գործերն ահազին ծավալվել են: Առաջադրություններն ել մյուս կողմից են հոգիս հանում:

ԳԱՐԻԳ.—Յես ել հենց նոր այդ եյի ասում: Դե գույ յել շատ խորքերից մի բռնիր: Ենապես ելի կրոնը թույն ե, վարդապետներն ու յեպիսկոպոսներն երենց շահերի...

ՌՈՒԲԻԿ.—(Ընդհատում ե) Սպասիր, սպասիր, չեղավայդպես: Զի կարելի այդպես դիմանց անել: Հարկավոր ե խորանալ Քրիստոսի լեզենդի տնտեսական-քաղաքական նշանակության և նրանց պատճառների մեջ:

ԳԱՐԻԳ.—Դե գույ գիտես, միայն թե դեկուցումը լինի: ՌՈՒԲԻԿ.—Լավ, կփորձեմ, թե բան դուրս յեկավ, կը-զեկուցեմ: Յես դնամ, դասը սկսված կլինի: (Գնում ե):

ԳԱՐԻԳ.—(Նրա յետնից) Զեկուցումը քեզ վրա յեմ գըրում: Սուրբ կույսին չմոռանաս:

ՌՈՒԲԻԿ.—(Կիսադաշտում ե, ծիծառելով) Լավ, լավ, չեմ մոռանա քո սուրբ կույսին: Ուղօնմ ես, Մահմեդին ել մեջ քաշեմ:

ԳԱՐԻԳ.—Քաշիր, քաշիր: Մի լավ-լավաթին հուփ տուրեղ անիրավ որբերին, վոր զուր տեղը մարդկանց միտք չպղտորեն:

Ռուբիկը գնում ե:

ԳԱՐԻԳ.—Յես ել դնամ: Զգիտեմ վարից սկսել... Ե՛կում ե գնալ:

Ներքեվից բարձրանում ե ՀԱՅԿՈՒՇԾ:

ՀԱՅԿՈՒՇ.—(Դեռևս հեռվից բարեվելով) Բարեկ, Գա-

Քիզ : Աշխորհուրդը ծննդյան տոռների ժաման
 ի՞նչ է մտածում :
ԳԱՐԻԳ.—կազմակերպում ենք հակալրոնական յերեւ
 կույթ աշակերտների և ծնողների համար :
ՀԱՅԿՈՒՇ.—Ծրագիր կազմե՞լ եք :
ԳԱՐԻԳ.—Հապա ի՞նչպես : Կլինի խառը դրական-յերա-
 ժըշտական բաժին, աշակերտության ուժերով :
 Ուզում ենք մի գործողությամբ փոքրիկ պիես
 վերցնել, բայց սլատրաստելու խնդիրը մի քիչ
 դժվարացնում է գործը :
ՀԱՅԿՈՒՇ.—Պինսը լավ է : Անպայման վերցրեք : Մի
 շաբաթից ընկեր Զալյանը վերադառնալու յե,
 կոդնի :
ԳԱՐԻԳ.—Ախր մի կարգին պիես ել չկա :
ՀԱՅԿՈՒՇ.—Մեղավորը պրոլետարողներն են . Հարկա-
 վոր և նրանց մի լավ խիել, վոր շարժվեն : Դրա-
 մատուրդիան բոլորովին մոռացել են :
ԳԱՐԻԳ.—Մտադիր ենք գիմել վարիչին, դուցե նա մի
 բան անի :
ՀԱՅԿՈՒՇ.—Վատ չի լինի, թեև յերեկ բան դուրս չի
 դա : Կրկին պիտի պատճառաբանի, վոր ժամա-
 նակ՝ չունի, չափազանց զբաղված ե : Վատ չեր
 լինի նրան ել մի փոքր խիելինք, վորպեսզի
 դպրոցի հասարակական աշխատանքների վրա
 ավելի ուշադրություն դարձնի : Չեմ հասկանում
 ինչո՞ւ նա շարունակ խուսափում ե :
ԳԱՐԻԳ.—Աշխորհուրդի նիստերից ել համարյա շարու-
 նակ բացակայում ե, թեև մանկավարժական
 խորհրդի կողմից նա յե կցված : Բազմաթիվ
 ընդհանուր խնդիրներ մնացել են առանց լուծ-

վելու : Ահագին հարցեր են կուտակվել : Ուզ-
 ղակի չենք իմանում ինչ անել :
ՀԱՅԿՈՒՇ.—Ճիշտ ե, ճիշտ ե, գիտեմ : Բյուրոն ել հան-
 ցավոր ե այդ բանում : Հարկավոր ե մտածել
 այդ մասին : Բյուրոյի ուրբաթ որվա նիստին
 դիր այդ հարցը : Ծրագրում ուրիշ ի՞նչ ունիք :
ԳԱՐԻԳ.—Հակալրոնական զեկուցում :
ՀԱՅԿՈՒՇ.—Ո՞մ ե հանձնաբարված :
ԳԱՐԻԳ.—Ռուբիկին :
ՀԱՅԿՈՒՇ.—Վոչինչ :
ԳԱՐԻԳ.—Ռուբիկին իր վերջին հոդվածով՝ Արտազյանի
 արտահայտած մտքերի գեմ՝ ապացուցեց, վոր
 հաստատուն դիծ ունի : Հա, ճիշտ յԵ՞ՐԲ ենք
 քննելու նրա դիմումը կոմյերիտմիության մեջ
 ընդունելու մասին :
ՀԱՅԿՈՒՇ.—Ծառապելու կարիք չկա : Դեռ մատերիալ
 եմ հավաքում : Պետք ե զգուշ լինել : Նրա ին-
 տելիքնատական, ավելի շուտ չինովնիկական
 ծագումը... Ծա՛տ ել չեմ հավատում յես դը-
 րանց ...
ԳԱՐԻԳ.—Դու չափից ավելի կասկածամիտ ես, տես,
 ձախության մեջ չընկնես քո անվերջ կասկած-
 ներով և հանկարծակի տնվերապահ յերակա-
 ցություններով :
 Միջանցքում յերեվում ե Շմուլ :
ՀԱՅԿՈՒՇ.—Լավ, լավ, իրատ մի կարդա, կտեսնենք :
 (նկատելով Շմոյին) Շմո՛, Շմո՛ :
ՇՄՈ.—(Մոտենում և ցերեմոնիայով գլուխ ե տալիս)
 Հարգանքներս մեկ ու կես, ընկեր հրամանա-
 տարին :

ՀԱՅԿՈՒՇ. — Կեսը պահիր քեզ, հրամանատարն ել ուրիշ
տեղ տես, գուցե գտնես: Ի՞նչ ես արել:

ՇՄՈ. — Ի՞նչը:

ԳԱՐԻԳ. — Յեվ դեռ խմբագիր ե:

ՇՄՈ. — Զենքերդ պահիր, շուտով ուրիշ բանի պետք
կգա:

ՀԱՅԿՈՒՇ. — Ալեգորիաներդ թող: Ասա, ի՞նչ կա: Ար-
տազյանի դեմ յեղած հողվածն ի՞նչ տպավո-
րություն է գործել:

ՇՄՈ. — Պայթել ե ոռութի պես: Միայն թե աշակերտ-
ները, չգիտեմ վորտեղից, իմացել են, վոր
հողվածը նուրիկն է գրել: Մի մասը ջղայնացել
ե: Արդեն սկսել են քչփչալ անկյուններում:

ՀԱՅԿՈՒՇ. — Իմանալը վնաս չունի:

ԳԱՐԻԳ. — (Զարմացած) ինչպե՞ս:

ՀԱՅԿՈՒՇ. — Ինչո՞ւ յես զարմանում: Մեզ համար նու-
բիկի դեմքը վերջնականապես կպարզիլ, նա-
յած թե ինչ դերք կրոնի իր վրա հարձակվող-
ների դեմ:

ՇՄՈ. — Այդ այդպես ե, բայց տղան մեղք ե, պետք է
պաշտպանել, թե չե կուտեն:

ՀԱՅԿՈՒՇ. — Վոչինչ, թող դիմանա: Պայքարը նրան կը-
մուտեցնի մեզ:

ՇՄՈ. — Նու, խմբագիրն համաձայն ե: Դե, յես վազեցի:
Լրազը հերթական համարի համար հարկավոր
ե նյութ հավաքել: Ո՞խ, ես իմ թղթակիցնե-
րը... Մինչև նյութ ես ստանում, ինքտ նյութ
ես զառնում: Հարյուր անգամ պիտի հիշեցնես,
մեկ-մեկ պիտի յետեվներից ընկնես, — հավա-

քես: Սարում վաշխար արածացնելը հազար տե-
ղամ ավելի հեշտ ե, յես ու իմ աստվածը:

ԳԱՐԻԳ. — Շմո, տես, համարը չուշացնես հա, թե չե՞
կորած ես: Առաջնորդողը կերի ընկեր Զալա-
նը, մի շաբաթից դալու յե:

ՇՄՈ. — Մի սովորեցնի, գիտեմ: Գնացի: (Գնում ե):

ՀԱՅԿՈՒՇ. — Նու, ես ել գնացի: Պրոմպտիայի գործի
մասին զեկուցում պիտի պատրաստեմ: (Գնում
ե դեպի ճախ կողմ):

ԳԱՐԻԳ. — (Կանգնած է մի տամանակ միայնակ, ապա
բայլում է դեպի աշ, սակայն հանկարծ կանգ
ե առնում, ձեռքը նակատին խփելով) Պահո՛...
մոռանալու ելի, հա՛... Ախր բանկոսպի վար-
չություն պիտի զնայի չուստերի համար...

Այդ ժամանակ ներբեւից քարձրանում
ե ԱՐՏԱԶԱՆԻ, մոայլ դեմքով: Առաջին
հրապարակում կանգ է առնում լրազը ա-
ռաջ:

ԱՐՏԱԶԱՆ. — Ահա քեզ նոր դաստիարակության ար-
դյունքները... Աշակերտը համարձակվում է ու-
սուցչի գիտությունը կառկածի տակ առնել և
նույնիսկ մեղագրել նրան... (Կարդում ե):

ԳԱՐԻԳ. — (Տեսնելով Արտազյանին, մի տեսակ տատան-
վող վիճակում ե) Սա յեր պահաս այստեղ...

Գարիգը շտապ իշխում է աստիճանեներով և
աշխատում է անհետելի անցնել դեմքը
դեպի պատից կանված լրազիքը դարձած
Արտազյանի մոտից: Սակայն նրա անցնե-
լու ժամանակ Արտազյանը արագ դառնում
ե նրա կողմը:

ԱՐՏԱԶԱՆ. — Սա ի՞նչ խայտառակություն է: Մով և
թույլ տվել այսպիսի հիմարություն:

ԳԱՐԻՒԴ. — (Կանգ և առնում, Արա բարկությունից վախ-
վորած) ի՞նչը, ընկեր Արտազյան:

ԱՐՏԱԶՅԱՆ. — (Բարկացած) ի՞նչպե՞ս թե ի՞նչը... Միծա-
ղո՞ւմ եք: Ո՞վ ե դրել այս զրապարառությունը:
Վերենի հրապարակում յերեխում ե Վա-
հագը: Տեսնելով Արանց, պահվում ե նա-
դաշարքի յետև, զաղտագողի հետևելով
Արանց խոսակցության:

ԳԱՐԻՒԴ. — Հողվածը... Միւնույն չե՞ թե ով ե դրել:

ԱՐՏԱԶՅԱՆ. — Ի՞ւշարկե վոչ: Անձնական հաշիվների ար-
դյունք ե դա, ուրիշ վոչինչ: Անշուշտ մեկն ե
նրանցից, վորը շարունակ իմ առաջադրու-
թյունները չի կատարում: Յես ձեզ լավ եմ
ճանաչում: Նա այս միջոցով կամենում ե տեր-
րորի յենթարկել ինձ, վորակսղի բավարար
նշանակեմ իրեն:

ԳԱՐԻՒԴ. — Այդ բանը պարզելը շատ հեշտ է, ընկեր Ար-
տազյան: Քննությունը բոլորը կպարզի:

ԱՐՏԱԶՅԱՆ. — Քննություն: Ի՞նչ քննություն:

ԳԱՐԻՒԴ. — Հողվածի արծարծած մտքերի քննությունը:

ԱՐՏԱԶՅԱՆ. — Այդ ո՞վ ե քննություն կատարելու:

Դո՞ւք:

ԳԱՐԻՒԴ. — Աշխորհուրդը:

ԱՐՏԱԶՅԱՆ. — Աշխորհուրդը... Զափից ավելի մեծ պա-
տասխանատվություն եք վերցնում դուք ձեզ
վրա: Ձեր ի՞նչ հասկանալու բանն ե այդպիսի
հարցերը: Դուք դեռ պիտի սովորեք:

ԳԱՐԻՒԴ. — Սովորելը մի՞թե խանգարում ե քաղաքական
հարցերով զբաղվել և դասակարգային անշեղ
դիմ վարել:

ԱՐՏԱԶՅԱՆ. — Զափազանց պատասխանատվություն արտահայ-
տություններ եք անում:

ԳԱՐԻՒԴ. — Ներեցեք, ընկեր Արտազյան, յես շտապնեա-
եմ: (Ուզում ե գնալ):

ԱՐՏԱԶՅԱՆ. — Քաղաքավարի յեղեք լսելու, յերբ ձեզ
հետ խոսում ե ձեր դասատուն:

ԳԱՐԻՒԴ. — (Կանգ և առնում) Յես ձեզ լսում եմ, ընկեր
Արտազյան:

ԱՐՏԱԶՅԱՆ. — Սա չտեսնված յերեվույթ է, սա... սա...
Սա ֆենոմենալ յերեւույթ է... Յես կրողո-
քեմ... յես կհրաժարվեմ ձեզ հետ պարապել...

ԳԱՐԻՒԴ. — Ներեցեք, ընկեր Արտազյան, հավատացեք,
յես շտապնում եմ... Դա ձեր անձնական գործն
է... (Ծոտապ իջնում ե աստիճաններով):

ԱՐՏԱԶՅԱՆ. — (Նայում ե իջնող Գարիգի յետեվից) Ահա
քեզ ներկայիս աշակերտությունը... Յեկ դեռ
հավակնություն ունեն...

Վերեվի հրապարակից զգուշորեն իջնում
ե Վահագը, մասենալով Արտազյանին:

ՎԱՀԱԳ. — Բարեվ ձեզ, ընկեր Արտազյան:

ԱՐՏԱԶՅԱՆ. — (Ցնցվում ե) Ո՞վ ե: (Կիսադանում ե
նրա կողմը, վոտքից զլուխ չափելով նրան,
կարծես առաջին անգամ ե տեսնում):

ՎԱՀԱԳ. — Բարեվ ձեզ, ընկեր Արտազյան:

ԱՐՏԱԶՅԱՆ. — (Զարմացած) Բարեվ ձեզ: Բա՞ն եք ա-
սում:

ՎԱՀԱԳ. — Ես ուզում եյի ասել ձեզ... Մենք ուզում ե-
յինք ասել ձեզ... Մենք չափազանց զայրացած
ենք այդ հողվածի համար...

ԱՐՏԱԶՅԱՆ. — Դո՞ւք: Ովքե՞ր—դո՞ւք:

ՎԱՀԱԴ. —ՄԵՆՔ : Ձեզ հարգող բոլոր լուրջ և կուլտուրական աշակերտները :

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—Այդպես :

ՎԱՀԱԴ. —ՄԵՆՔ դեմ ենք բոլոր այդ բջիջներին և աչխորհուրդներին : Դեռ մեր սովորելու ժամանակն ե, դուք այդ շատ ճիշտ եք նկատում :

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—Այդպես : Հետո :

ՎԱՀԱԴ. —Յես ուզում եյի ասել ձեզ, վոր հողվածը պետ ե...

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—(Ընդհանում ե, շտապ) Ո՞վ ե գրել հոդվածը :

ՎԱՀԱԴ. —Ռուբեկը :

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—Ռո՞ւբեկիը : Ձեյի սպասում :

ՎԱՀԱԴ. —Նա յե : Ինքը խոստովանեց իր բերանով Սերանին : Նա դեռ սպասում ե, վոր ձեզ ...

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—Վոր ի՞նձ ...

ՎԱՀԱԴ. —Վոր ձեզ սկսի հեռացնեն դպրոցից :

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—Այդ ի՞նչպես :

ՎԱՀԱԴ. —Կոմյերիտարյուրոյի միջոցով :

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—(Ներքին վախով) Կոմյերիտարյուրոյի :

ՎԱՀԱԴ. —Այո, բյուրոյի : Խուբիկը ուզում ե կոմյերիտարյուրոյի մեջ ընդունվել : Նա դրանով հող և սպառաստում իր համար :

ԱՐՏՍՈՉՅԱՆ . Այդպես : Այժմ հասկանալի յե :

ՎԱՀԱԴ. —Բայց մենք այդպես չենք թողնի... մենք միշտ չոցներ... (Զգուշուրյամբ չորս կողմն ե նայում) Սակայն այսուղ անհարմար ե... կարող են մեզ լսել...

ԱՐՏՍՈՉՅԱՆ .—(Ըմբռնելով նրա միտքը, նույնպես չորս կողմն ե նայում) Անցենք մերեվ... (Առաջ ե

անցնում : Վահագը հետեւում ե նրան : Նրանք բարձրանում են վերեվի հրապարակ և անցնում դեպի ձախ) :

Թեմը վրուշ ժամանակ դատարկ ե : Աջից գալիս ե Պերնը, փմտրելով մեկին :

ՊԵՐԾ. —Ձեմ հասկանում ուր կը ջագավ : Ասացի յել ճաղերի մոտ սպասիր : Բայց շատ ճարպիկ տղայ յե անպիտանը : Շատ ել խորամանկն ե : Ե՛ւ, Ռուբեկի բանը պլծած ե ...

Ռւրախ թռչունելով գալիս ե Վահագը ձախից :

ՊԵՐԾ. —(Տեսնելով նրան) Ի՞նչ ես գիտ մոզու նման արտինդ տալիս :

ՎԱՀԱԴ. —Պերծ, ամեն ինչ վերջացավ :

ՊԵՐԾ. —Ի՞նչը վերջացավ :

ՎԱՀԱԴ. —Առաջադրությունները... բոլոր պարտքերը... Արտազյանը խոստացավ բոլորը պիջել :

ՊԵՐԾ. —(Ռւրախ) Խոկապե՞ս :

ՎԱՀԱԴ. —Ճշմարիտ : Հարկավոր ե մի քեզ կրկնել դեսից-դենից և յերեք որից հետո... ամեն ինչ վերջացած ե ...

ՊԵՐԾ. —Մենակ քո՞նը :

ՎԱՀԱԴ. —Ում տեղն ես դնում ինձ... իհարկե վոչ : Բոլորինա... Մեր ողակի : Իմը, քոնը, Սիրանինը...

ՊԵՐԾ. —Բոա՛վո, Վահագ : Արտազյանը հիանալի ուսուցիչ ե և սքանչելի մարդ :

ՎԱՀԱԴ. —Իհարկե, իհարկե, իսկ թքած այն բանի վրա, վոր նա Հոկտեմբերյան հեղափոխության հետ համաձայն չե, կամ թե այն համարում ե պատմական մի սիալ :

ՊԵՐԾ. —Դե իհարկե, մեզ ինչ : Վահագ, գիտե՞ս ինչ կա :

ՎԱՀԱԳ. — (Հետաքրքրությամբ) Ի՞նչ:

ՊԵՐԾ. — Մեր Սերյոժան այս գիշեր կանչել ե քեզ, ինձ
և Սիրանին իրենց տուն: Ուրիշներն ել կլի-
նեն: Լավ պատրաստություն տնի: Կոնյակ,
դինի, զակուսականեր... Լյովան կրերի ջու-
թակը, Նյուրան ել դաշնամուրի վրա կնվա-
գի:

ՎԱՀԱԳ. — Այ, դա հասկանո՞ւմ եմ... Շա՞տ եմ ոի-
րում: Լա՛զաթ:

ՊԵՐԾ. — Ուրախ կանցնի, շատ:

ՎԱՀԱԳ. — (Հանկարծ մի բան կրահելով) Սպասիր, ա-
սում ես խմիչք ե՞լ ե լինելու:

ՊԵՐԾ. — Հա, ինչքան ուզես: Սերյոժային չես ճանա-
չում, ինչ ե: Նրա կոնյակը յերբեք պակաս չի:

ՎԱՀԱԳ. — Գիտես ինչ եմ մտածում, Պերծ:

ՊԵՐԾ. — Հը:

ՎԱՀԱԳ. — Ասում եմ Ռուբիկին ել քարշ տանք մի կերպ:

ՊԵՐԾ. — Ռուբիկին: Գժվե՞լ ես: Վոր գա, հետո յել
հողմա՞ծ գրի պատի թերթում:

ՎԱՀԱԳ. — Սպասիր, չես հոկանում: Տես, ինչ եմ մը-
տածում: Լավ կիսմացնենք, հետո յել... Հաս-
կանո՞ւմ ես...

ՊԵՐԾ. — (Մտածում ե) Կարծես լավ կլինի:

ՎԱՀԱԳ. — Իհարկե լավ կլինի: Այնպես կանենք, ինքը
դալմաղալ կսարքի, հետո յել մենք կպատ-
մենք ուրիշներին... Հասկանո՞ւմ ես, ամբողջ
դպրոցը կիմանա... Հետո յել... Բյուրոն կի-
մանա... Բակ դե գիտե՞մ ինչ կնշանակի...

ՊԵՐԾ. — Կեցցե՞ս վահագ: Հավանում եմ, լավ միտք
ե: Քա իսկական տեղը դիպլոմատիկական կոր-
պուսն ե: Սերյոժային յես կհասկացնեմ:

ՎԱՀԱԳ. — Բայց մենք յեթե կանչենք, դժվար թէ դա:
Ցերկում ե Սիրանը:

ՊԵՐԾ. — (Նկատելով Սիրանին) Կանչողն ահա ինքը
դալիս ե: Նա Սիրանի խոսքը չի մերժի:

ՎԱՀԱԳ. — Հազիվ թե, չես հիշո՞ւմ անցյալ որն ինչ-
պես բաժանվեցին:

Սիրանը մոտենում ե նրանց:

ՊԵՐԾ. — Այդ վոչինչ, Սիրանը ձեւերը լավ գիտե:

ՎԱՀԱԳ. — Հը, Սիրան, ինչո՞ւ յես դասից գուրս յեկել:

ՍԻՐԱՆ. — Խարեցի, թե գլուխս պտույտ ե դալիս, գուրս
յեկա թարմանալու: Բայց տուն եմ դնում:

ՎԱՀԱԳ. — Ի՞նչ կա:

ՍԻՐԱՆ. — Մետաքս հագուստու հարկավոր և կարդի ըե-
րել յերեկոյան համար: Դու յել ես լինելու,
չի՞: Ժանյակները պիտի փոխեմ: Անցյալ որը
զնել եմ Կարմիր խաչի տրուկերի խանու-
թից: Հրաշալի ժանյակներ են: Ամերիկական:
Հագուստիս շատ ե սազ գալիս:

ՎԱՀԱԳ. — Սիրան, լսիր, ընկերական մի.մեծ պարտա-
կանություն պիտի դնենք քեզ վրա:

ՍԻՐԱՆ. — Ի՞նչ:

ՊԵՐԾ. — Վոչ մի մերժում:

ՎԱՀԱԳ. — Դու պետք ե այս յերեկո Ռուբիկին բերես
Սերյոժայենց տուն:

ՍԻՐԱՆ. — Ռուբիկի՞ն:

ՎԱՀԱԳ. — Այս, Ռուբիկին: Այդպես հարկավոր ե:

ՍԻՐԱՆ. — Ի՞նչո՞ւ: Նա ի՞նչ կամպանիայի ընկեր ե:

ՎԱՀԱԳ. — Ուրիշ հաշիվ կա: Հետո կբացառեմ:

ՍԻՐԱՆ. — Լավ, կփորձեմ:

ՊԵՐԾ. — Փորձելս վո՞րն ե, անպայման թեր:

ԱԴՐԱՆ. — Վախենում եմ բան դուրս չփա:

ՊԵՐՃ. — Մի կոտրապվիր, վոր ուղենառ, դուրս կդաշ
նա քեզ կլսի, թեև չուն ու կատու յեզ իրար
չետ:

ՍԻՐԱՆ. — Ավելորդ բաներ դուրս մի տուր: Ասացի կը
փորձեմ, կդա, լավ, չի դա, աղաչանք անո-
դր չեմ:

ՎԱՀԱԳԻ. — Կրերես անպայման: Ասա, ի՞որ Սերյոժան
հրավիրել ե, վոր շատ և խնդրում, հառկա-
ցա՞ր: Մի բան հնարիր... Գործի համար ան-
հրաժեշտ ե զոհողություն:

ՊԵՐՃ. — (Ծիծառում ե) Այ թե ինչ սովորեցնելու պը-
տուղ ես գտել... Նա ինքը շատ լավ դիտի մի-
ջոցները:

ՍԻՐԱՆ. — Կո՛րի: Յես գնացի: (Գնում ե, իջնելով սան-
դուղքներով դեպի ցած):

ՎԱՀԱԳԻ. — Մենք ել գնանք, չուտով դառը կվերջանա:
Նրանի ուզում են գնալ, բայց այդ բո-
պեյին աստիճաններով վերև ե բարձրանում
Շնոն, մի քեի տակ փաքարած յերկար
քզքեր, մյուս քեի տակ մի փաքեր կար-
միր կտոր, իսկ ձեռքերին ունի ներկարան
ու վրձիններ: Տեսնելով Վահագին ու Պեր-
ճին, ձայն ե տալիս, աստիճաններով բար-
ձրանալով...

ՇՄՈՒ. — Հը, պարլամենտը գործո՞ւմ է... անկյուննե-
րում...

Վահագը և Պերճը չեն պատասխանաւ
ու շտապ բայլերով հեռանում են:

ՇՄՈՒ. — (Նրանց յետևից) Դիմումատիկական հարաբե-
րությունների խզո՞ւմ: Պուանկարեն ակտիվա-
նո՞ւմ ե: Հա՛, հա՛, հա՛... (Հանկարծ ընդհա-
տում և ծիծաղը): Այ քեզ բան: Հապա սրանք
ո՞ւր զնեմ: Աշխորհրդի սենյակը փակ, բանա-
լին ել Սիմոն բիձայի մոտ: Խելքի տոպրակ,
դե են և ներքեւից բարձրանում են, ասա թեք-
վիր բանալին վերցրու ելի... Հիմի ի՞նչ անեմ:
Մեկ ել այս բոլորը քարշ տամ ներքե ու մեկ
ել կրկին վերև հանե՞մ... Ե՛ս, սարում վոչ-
խար արածացնելն ավելի հեշտ ե, յես ու իմ
ասովածը վկա: Ձե՛, մեկ ել ներքե իջնողը
չեմ: Հը, ի՞նչ անեմ: (Կանգնում և անորոշ) Արի ուղիոյի ողնության դիմենք: (Մի փոքր
կուանում և նաղերից ու ձայն և տալիս) Սի-
մո՞ն բիձա... Սիմո՞ն բիձա... ո՞հո՞-հո՞... (Հան-
կարծ վախեցած ինքն իր ձայնից, ընդհատում
ե) Այ քեզ ոյին... Հիմնա ձայնս ամբողջ դասա-
րանները բռնեց... ել պրծա՞նք: Խուլիգանու-
թյան մեղալը զոշիս կպավ: Սիմոն բիձեն ել
ով գիտե հին թամզությունն ե միտ բերել ու
են զաղի հոգսն ե քաշում:

Ներքեվից յերեվում ե Սիմոն բիձայի
ալեհեր զլուխը:

ՇՄՈՒ. — Սիմոն բիձա, են զաղը... սրանք մի տար քո
սենյակը, յես վազ տամ դասիս, թե չե շատ
եմ ուշացել:

ՄԻՄՈՒ ԲԻՋԱ. — Հը ելի ի՞նչ կա, սարի եծ:

ՇՄՈՒ. — Աշխորհրդի սենյակը փակ ե, Սիմոն բիձա,
սրանք մի տար քեզ մոտ: (Իջնում և մի քանի

աստիթան) Առ, Սիմոն բիծա: (Չերքի իրերը
համարյա զցում ե նրա թիկին) Ես գնա-
ցի: Ընկեր Միանդարյանը... ներողություն,
տիկին Միանդարյանը հիմի հնդուհավի նման
ուռած-իքված, վրա կտա... Հոգիս հանելու
յի...

ԱՐՄՈՒՆ ԲԻՋԱ.—(Չարացած նայում ե վուտերին)
Վառներդ: Ե՛լի ցեխոտ... Բա են զաղը...

ՃՄՈ.—(Վագելով ասուինանիերով վեր) Ժամանակ չը
կա, Սիմոն բիծա, Են ասովածը ժամանակ չը
կա, մի նեղացի...

ԱՐՄՈՒՆ ԲԻՋԱ.—(Փերփերում ե) Դե արի ու մի նեղա-
ցի... (Խնօսում ե դանդաղ, գնում ե):

Յերք Շմոն թեմում ե հրապարակից
դեպի միջամցի կողմը, նրա դիմաց դուրս
ե գալիս Արտազյանը: Շմոն մի պահ շփոր-
ված կանգ ե առնում, ապա ուզում ե փախ-
չիլ:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Սպասեցեք... Դուք այն...

ՃՄՈ.—Ներողություն, յես թույլտվություն ստացել
եմ: Յեթև չքնայի, այլևս կարմիր կտոր չե-
յինք ստանա, բոլորը կտանեյին:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Վոչ, այդ չե... Դուք այն... բջիջի ան-
դա՞մ եք:

ՃՄՈ.—Յես կոմյերիտբյուրոյի անդամ եմ:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Ասացեք իմադրեմ, դուք ուզում եք ինձ...

ՃՄՈ.—(Խանում ե ինչ ե ուզում ասել Արտազյանը
և ընդհանում ե նրան) Ներեցեք, այդ յես
չեմ: Խոսեցեք քարտուղարի հետ:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Քարտուղարի իսկ ո՞վ ե քարտուղարը:
ՃՄՈ.—Հայկուշը: Ընկեր Հայկուշը:
ԱՐՏԱԶՅԱՆ.—Հայկուշը... այն վար... իսկ վո՞րտեղ
կլինի նա այժմ, չգիտե՞ք:
ՃՄՈ.—Դասարանում: Իսկ դասից հետո, բյուրոյի սեն-
յակում:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Իսկ վո՞րտեղ ե բյուրոյի սենյակը:
ՃՄՈ.—Բակի կողմից, աջ կողմի սենյակը: Դուան վրա
գրված ե:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Ա՛խ, հա, ծառայի սենյակում:

ՃՄՈ.—Չգիտեմ:

ԱՐՏԱԶՅԱՆ.—Այս, այս, առաջ այնտեղ ծառան եր
ապրում... Դպրոցի ծառան... իսկ այժմ բյու-
րոն ե... Նու, չնորհակալություն: (Շտապ
գնում ե):

ՃՄՈ.—(Մի պահ տարակուսած) Այ քեզ բա՞ն... Ար-
տազյանը կոմյերիտբյուրո... Տարորինակ ե...
Շատ տարորինակ ե... (Հանկարծ հրմվանքով
բռչկոտում ե տեղում) Ազդո՞ւմ ե... ազդո՞ւմ
ե... (Հանկարծ լրջանում ե և վազում ե մի-
ջանցիցի կողմը) Վա՞յ, վա՞յ, վա՞յ, ինչքա՞ն
ուշացա... Այլևս ընկեր... ներողություն, տի-
կին Միանդարյանի ձեռքից ազատվողը չեմ:
Կո՞րանք: (Փախչում ե):

ՎԱՐԱԴՈՒՅՐ

ՅԵՐԱԿԱՆ

ՍԵՊԱՆԻԱՊՈՒՅԻՆ : Ապակեպատ բուփես՝ գա-
նազան ապակեղենով : ՄԵՇՅԵԿ նաշասեղանի՝
վերան առաստաղից կախված յելեկուրական
ջահ , մեծ և գեղեցիկ լուսամիտքով : Պատի
ժամացույց : Աբովեներ : Պատերին՝ նկարներ :

Յերեկոյանում ե: Մքնշաղ: Ռուբիկը լու-
սամուտի առաջ կարդում ե:

ԹՈՒԲԻԿ.—(Ընդհատում ե ընթերցումը և յերկար ճա-
յռում ե զրբում յեղած նկարին: Վոգեվորված)
Կեցցե՛ս, Գարրի Ալզման... Այդպե՛ս, այդ-
պե՛ս... Ամերիկայի սրբութար և աշխատավո-
րական պատանեկությունը յերբեք չի կարող
բոյսկառաւոների հետ լինել: Այդպես, Գարրի
Ալզման, պայքարիր, մերկացրու նրանց իս-
կական գեմքը, նրանց նպատակները... Բարնտ
են նատեցրել... Հի՞նգ տարի... Վոչի՞նչ: Ա-
վելի կամրանա, ավելի հկոփի: (Խորասուզ-
վում ե ընթերցման մեջ):

Դուռը քափով քացվում ե և ներս ե գալիս
մայրը՝ տիկին ԱՍԾՂԻԿԾ, հոգնած, հեղա-
լավ, ձեռքին մի կույտ մեծ ու փոքր ափսե-
ներ։

ԱՅՏՂԻԿ — ՈՒՓ, մեռանք ե՛լի, մե՛ռանց ։ Ես ել ո՛ւր
ե, Ես ել ապրուստ ե ։ Ինչ վոր առնաւմ ես,
կնիքիով, ուր վոր գնում ես — ո՛չերեղ ։

(Դառնալարվ տղայիմ) ես հ^ը քո քարոզած սուցիալիզմը... Կորպի հա՛ ետ տեսակ սոցիալիզմը: Մինչեվ մի քանի հատ գրողի տարած տարելկա առա, կանդնելուց վուներս մե ջուր իջավ, կողքերս ու դոշ ել ջարդ ու փշուր արեցին: Աև կասլած կնանիք ել հո մտիկ չեն անում, չենց վրա յեն ընկնում... ամոթ ու արուռ կորցրել են բոլորովին: Մանավանդ եղ անսպեռ վանեցիք: Պա՛, պա՛ պա՛, պա՛, պա՛, պա՛, դա՛դ, դա՛դ գրանց ձեռքից... (Ափաները դնում ե սեղանի վրա, ինքը նստում ե հանգստանալու):

ԱՌԻՒԲԻԿ -Մայրիկ, ինչո՞ւ յես ուրիշներին մեղադ-
րում, չե՞ վոր դու յել նրանց նման ես անուած :
Յեթե ամեն մեկդ հերթում հանգիստ կանգ-
նեք, մեկդ մյուսից առաջ չընկնեք, այն ժա-
մանակ վոչ աղմուկ կլինի, վոչ միմիանց վոտք
ու կողք տրորել :

ԱՍՏՂԻԿ. — Շա՞տ բան ես հասկանում... Քաղաքավա-
րությունը կորել է, պատիվ ու հարգանքը վե-
րացել, մեծ ու փոքր ել չեն ճանաչում:

ԹՐԻԲԻԿ.—Յուլոր հավասար քաղաքացիներ են, մայ-
րիկ, մեծ ու փոքրը ի՞նչ գործ ունի այդտեղ:
Հերթ է, բայց ել հավասար մարդ եք:

ԱՍՏՂԻԿ .— Եաւու ես ինելոքացել : Դու են ասա, վոր ե-
լած-չելածը կտրվել ե, ժողովրդի աչքին թող
փշելու համար մի յերկու կտոր բան են բե-
րում գցում խանութ, դրա համար ել ժողօ-
վուրդը այլպիս վրա յե պրծնում : Թող մի
ապրանք ունենան, տեսնեմ ել այլպիս կրինի՞ :

ՌՈՒԲԻԿ.—Ամոթ ե այդպիս բաներ խռովը, մայրիկ:
ԱՇ, հրեն դու այդքան ափսե յես առել, արի
խոստովանիր, մենք ափսեցի կարիք ունե՞նք:

ԱՍՏՀԻԿ.—Հիմի, ճշմարիտ ե, չունենք, բայց վոր կո-
տրվեցին, հետո ի՞նչ անենք:

ՌՈՒԲԻԿ.—Յերբ կոտրվեցին, նոր այն ժամանակ ել
կառնես:

ԱՍՏՀԻԿ.—Այ, ասեցիր Ե՛լի... Այն ժամանակ տարել-
կա վո՞րտեղից, վոր առնեմ:

ՌՈՒԲԻԿ.—Այստեղից, վորտեղից այժմ առել ես:

ԱՍՏՀԻԿ.—Աչքս լույս... Առավոտվա եկած ապրան-
քը մինչեվ ճաշ չի մնում, սա ասում ե սպա-
սեր, յերբ կոտրվի, նոր կանես: Չե՛, վորդի,
դու չես հասկանում, դրանք զատարկ խոսքեր
են: Դրությունն այժմ այնպես ե, վոր հարկա-
վոր ե ամեն բանի պաշար ունենալ: Տարելկա
յե, թող պահարանում ընկած մնա, հաց ու
ջուր չո չի ուզում: (Վեր ե կիսում տեղից,
բաց ե անում բռնիտը, տեղավորում ե ափսե-
ները):

ՌՈՒԲԻԿ.—Բոլորն ել քեզ նման են մտածում, դրա
համար ել այդպիս պոչեր են ստեղծվում, ըս-
տացված ապրանքն ել չի բավականացնում:
Հարկավոր ե թե հարկավոր չե, առնում եք
ու առնում:

ԱՍՏՀԻԿ.—Խնդրում եմ դու իմ գործերում շխառնվես:
Թո քարոզները քեզ համար պահիր: Եղուց-
մյուս որը վոր մի բան պահասի, կզաս, թի
տուր, թիր: Ո՞վ պետք ե պատասխան տա: Ա-

հագին աղա յես, փոխանակ հիմար-հիմար բան-
ների յետելից ընկնելու, ավելի լավ կանես
տան մասին մտածես: Հաղար պակասություն
ունենք: Ուրիշների տանից յերեք-չորս հոգի
կոռպերատիվներում ոչերեղ են կանգնում,
իսկ յես մենակ եմ: Սաղ որը ե'ստեղ վազի,
ե'նտեղ հասի: Ե'ս կոռպերատիվ, ե'ն կոռպե-
րատիվ: Կտրվի՛ իմ որը, վոր յես եմ անում:
ՌՈՒԲԻԿ.—Տարորինակ բաներ ես ասում, մայրիկ: Նոր-
մայով ինչ վոր հասնում ե, ենե ստանում ենք:

ԱՍՏՀԻԿ.—Նորմա՞յով... Շա՞տ ե հերիք անում քո
նորման:

ՌՈՒԲԻԿ.—Ի՞նչպես ուրիշները, մեկն ել մենք:

ԱՍՏՀԻԿ.—Ուրիշները... Ուրիշների հետ յես ի՞նչ
գործ ունեմ: Ուրիշները դուցե սովոր են չոր
հացով յոլա գնալ, նրանք գուցե սովոր են գե-
ղացու նման բոլորով կերակուրը մի ամանից
ուստել: Յես չեմ կարող: Յես ուրիշ տեսակ եմ
սովոր:

ՌՈՒԲԻԿ.—Միալը հենց այդտեղ ե: Ապրում ես նոր
ժամանակ, բայց շարունակ քաշում ես զեպի
հինը: Նորից ամենեվին բան չես հասկանում:
Այդպիս չի կարելի: Լրազիր կարզա, տես մի
ինչե՞ր են կատարվում, ինչպե՞ս ե փոխվում
աշխարհն ու մարդկանց կյանքը:

ԱՍՏՀԻԿ.—Ի՞նչ կա լրազիրում, վոր ինչ կարդամ: Միշտ միմուրն բանը... սո՞ցմրցում, հա՛րլա-
ծային, յես ինչ զիտեմ-կամպանիա, զա՛րնա-
նացան, ա՛շանացան... կո՛նտրակտացիա...
կարծես թե գյուղացին ինքը չի իմանում յերբ

յանի, յերբ հնձի: Հիմի յել նոր բան են դուռս
դցել—ամ' ջ թեքում, ձա՛խ թեքում, յերկո՞ւ
Փրոնտով Հարգածենք... Լոմինածե, յես ինչ
դիտեմ ելի ինչ... Առաջլա լրադիրն ել ուրիշ
բան եր, համ ու լազաթ ուներ: Որինակ, հենց
«Մշակը»... (Դուռը ծեծում են): Մտեք:

Ներս ե գալիս ՄԱՐՈՒՍՅԱՆ:

ՄԱՐՈՒՍՅԱՆ.—Բարեվ, Աստղիկ: Նոր հենց Սիրանու-
շին տեսա, ասեց Աստղիկը մի բեռը տարելկա
յեր տանում: Եկա իմանամ եղ վո՞րտեղից ես
առել:

ԱՍՏՂԻԿ.—Բարով ես յեկել, Մարուսյա: Նստիր: Սի-
րանուշը ճիշտ ե ասել: Ճաշից հետո, վոր Սո-
լոմոնը պարկեց հանգստանալու, մի քանի մա-
նեթ փող կար ձեռիս, ասի գնամ պարտնիիի
մոտ. ուզում եմ իմ են կանաչ չորիս ֆառոնը
փոխել տամ, հիմի ել եղտեսակ չեն հազնում:
Անց եմ կենում Արովյանով, տեսնեմ Կուլտու-
րայի տան գիմացի կոռպերատիվի առաջ ժո-
ղովուրդ ե, վոր լցվել է: Տղամարդ, կին, յե-
րեխա... համարյա իրար զլիսի վրայով են
ներս ընկնում: Ի՞նչ կա, ի՞նչ չկա, —թե տա-
րելկա յեն բաց թողնում: Վոր տեսա այդչափ
ժողովուրդ ե հավաքվել, մասածեցի, վոր ես-
տեղ մի քան կա:

ՄԱՐՈՒՍՅԱՆ.—Հա, իհարկե: Յերեվի տարելկեղենն ել
են արտասահման ուղարկում:

ԱՍՏՂԻԿ.—Հենց յես ել եղանակ միտք արեցի: Ուզեմն,
նշանակում ե, շուտով տարելկա յել չի ճար-
գելու: Միտքս փոխեցի, գնացի ոչերեղ կանգ-

նեցի: Լավ եր, կնիժկան մոտս եր: Ուղիղ յեր-
կու ժամ կանգնեցի, մինչեվ ոչերեղն ինձ հա-
սավ: Մի յերկու դյուժին առա:

ՄԱՐՈՒՍՅԱՆ.—Շատ ել լավ ես արել, իհարկե: Վերջա-
ցա՞վ, թե ելի կա:

ԱՍՏՂԻԿ.—Զե, շատ կա:

ՄԱՐՈՒՍՅԱՆ.—Ե՛, փառք աստծո: Եզուց գնամ մի
քանի հաս ել յես առնեմ: Թե չե, մեկ ել տե-
սար հետո մնացինք առանց տարելկի: Ի՞նչ տե-
սակ են, բանի նմա՞ն են: Մի բեր տեսնեմ:

Նկատելի յե, վոր նրանց խոսակցուր յու-
նը Ռուբիկի վրա վաս ե ազդում. նա նստած
տեղում անհանգիստ շարժում է անում:

ԱՍՏՂԻԿ.—Աղջի, գե սավետական ասլրանք ե ելի, ինչ
պետք ե լինի: Պիտի հաշտունք, ճարներս ինչ:
(Վեր ե կենում տեղից և բարփեալից հանելով մի
բանի ափսի, տալիս ե Մարուսյային):

ՄԱՐՈՒՍՅԱՆ.—(Վերցնում ե, դիտում ե ափսեները զա-
նազան կողմերից) Ասա շինում եք, գե ենա կար-
գին շինեցեք ելի, եսպես կոշտ ու կոպիտ ինչո՞ւ
յեք անում:

ԱՍՏՂԻԿ.—Ե՛, ասում ես ելի: Ախր մի գործի գլխին
վոր հակողություն չլինի, ենա եղակս կլինի ե-
լի: Տերը ո՞վ ե, վոր...

ՌՈՒԲԻԿԻ.—(Զդայնացած) Տերը ինքը բանվորն ե:

ՄԱՐՈՒՍՅԱՆ.—Բանվորն ե յե՛, վոր այս որին ենք հա-
մել:

ՌՈՒԲԻԿԻ.—Ի՞նչ որի յենք հասեր: Դրանք բոլորը ժամա-
նակավոր բանին են: Սպասեցեք թող մի յերկիրն

ինդուստրացվի, հնգամյակը կատարվի, այն
 ժամանակ ամեն ինչ և՛ լավ կլինի, և՛ առաջ:
ՄԱՐՈՒՄՅԱՅԻՆ.—Քա, Աստղիկ ջան, չինի տղեղ կոմառ-
 մուլ և դրվել:
ԱՍՏՂԻԿ.—Վո՞ւ, ինչե՞ր ես ասում, Մարուսյա, վո՞նց
 կլինի այդպիսի բան:
ՄԱՐՈՒՄՅԱՅԻՆ.—Ի՞նչ իմանաս, աշխարհի բաները հիմի
 հասկանալ չի լինում:
ԱՍՏՂԻԿ.—Մեր ընտանիքում այդպիսի բան չի կարող
 պատահել:
ՌՈՒԲԻԿ.—Սիսալվում ես, մայրիկ, կարող ե պատա-
 հել:
ՄԱՐՈՒՄՅԱՅԻՆ.—Աիր յես ասո՞ւմ եյի... Աստղիկ ջան,
 չնեղանաս, սրանից հետո ձեր տուն զնալ-դա-
 րը վտանգավոր ե գառնում:
 Այդ բափեյին բացիւմ ե կից սենյակի
 դռութ և շեմքին յերեվում ե ՍՈԼՈՄՈՆ
 ԹԱԴԴԱՆԻՉԸ, համառքեն նայելով Ռուբի-
 կին:
ՍՈԼՈՄՈՆ.—Ասում ես կարո՞ղ ե պատահել, Հա՞...
 Յես քեզ ցո՞ւց կտամ—կարող ե պատահել...
 Տե՞ս, յես այդ տեսակ բաներում յերկար-բա-
 րակ մտածողը չեմ... Իմ տան մեջ յես ինձ
 թշնամի չեմ կարող պահել... Փողո՞ց կդնաս:
 Մարուսյան նենգորեն ժպտում ե: Աստ-
 ղիկը կախ ե զցել գլուխ: Ռուբիկը ձեռքի
 գիրքը դնում ե լուսամուտի գոգն ու վլուքի
 կանգնում:
ՌՈՒԲԻԿ.—Հայրիկ...
ՍՈԼՈՄՈՆ.—Մուս արա, քանի չեմ կատաղել:

ՌՈՒԲԻԿ. —Հայրիկ, զու խորհրդային ծառայող ես...
 գու պետք ե հասկանաս...
ՍՈԼՈՄՈՆ.—(Ընդհատում ե) Փող են տալիս, ծառա-
 յում եմ... լավ իմացիր... Խելքը գլուխու-
 հավաքիր, փուչ բաների յետեվից ընկնելը
 թող: Քո ինչե՞ղ ե հարկավոր կոմսոմոլը կամ
 թի սոցիալիզմը: Դու ինձիներ կդառնաս, մեծ
 ռոճիկ կստանաս ու քո քեֆին կապրես: Եեվ
 վորպես սպեցի, ամեն տեղ ել խոսքդ անց կկե-
 նա:

ՄԱՐՈՒՄՅԱՅԻՆ.—Իհարկե, սպեցները մեծ փող են խփում:
 Այս, հրեն Պյուտը Գրիգորիչի տղեն: Այս տարի
 յե դեռ ավարտել, արգեն յերեք-չորս հարյուր
 մանեթ ռոճիկ ե ստանում ամսական:

ՌՈՒԲԻԿ.—Խորհրդային կարգերում մարդու կամքի
 վրա բննանալ արգելվում ե: Դուք ինձ չեք կա-
 րող հարկադրել: (Գնում ե դեպի դրան կող-
 մը, ուր կախված ե իր վերարկուն):

ԱՍՏՂԻԿ.—Ռուբիկ, այդ ի՞նչ լեզվով ես խոսում հորդ
 հետ:

ՍՈԼՈՄՈՆ.—(Քայլ ե անում դեպի նա) Յես քո լե-
 զուն կպոկեմ: Կսովորե՞ս ծնողիդ խոսքով
 շարժվել:

Ռուբիկն ուզում ե վերցնել վերարկուն:
ՍՈԼՈՄՈՆ.—Ռուբիկ: (Խլում ե Արա ձեռքից վերարկուն
 և նետում սենյակի վերին անկյունը) Տանը վեր
 ընկիր, վոչ մի տեղ չես գնա:
 Ռուբիկն այլայլվում ե, քայլ ե անում
 կարծես հորը դեն իրեւու և մեռմելու վերա-

կուն, բայց մայրը վրա յե հասնում, բռնում
և նրան ու բաշում մի կողմ:

ԱՍՏՂԻԿ.—Հորդ մի բարկացնի, վորդիս: Ամոթ արա.
տես, ինչպես ե գունասովել:

Ռուբիկն ազատում ե մոր ձեռքից,
անցնում ե մի կողմ մոայլ ու գունաված,
հազիվ զապած իր բորբոքված բարկությու-
նը:

ՍՈԼՈՄՈՆ.—Այդպես:

ՄԱՐՈՒՍՅԱ.—Դե, յես գնամ: Ներողություն, վոր ան-
հանդիսատ արեցի, Աստղիկ ջան: Եգուց գնամ
յես ել մի դյուժին առնեմ: Բարի գիշեր, Սոլո-
մոն Բազգանիչ:

ՍՈԼՈՄՈՆ.—Մնացեք տիկին Մարուսյա: Լավ ե, վոր
յեկել եք: Շուտով ինոսիֆ Արկադիչն ել կդա:
Ֆրապի կամպանյան կդրստվի:

ՄԱՐՈՒՍՅԱ.—Զե, գնամ, չնորհակալ եմ: Մոտս ել
այնքան փող չունեմ:

ՍՈԼՈՄՈՆ.—Վոչինչ, վոչինչ, դամերիա ունեք: Պարտ-
քով կիսաղք:

ԱՍՏՂԻԿ.—Մարուսյա, զե նստիր, թե աստվածդ կսի-
րես: Թեյ կիմենք: Մալինի մուրաբա ունեմ:
Ռուբիկը վերցնում ե զիրքը և անցնում
մյուս սեմյակ:

ՍՈԼՈՄՈՆ.—(Նայելով Ռուբիկի յետեվից, դառնում ե
կնոջ) Բան եմ ասում,—չլինեմ-չիմանամ, թե
տանից դուրս ե գնացել:

ԱՍՏՂԻԿ.—Գուցե ժողով ունի:

ՍՈԼՈՄՈՆ.—Ժողով-բան չեմ իմանում: Հենց այդ ժո-
ղովներն են նրանց խելքահան անողը: Մեղա-

վորը դու յես, շատ ես յերես տալիս, չես կա-
րողանում յենթարկել քեզ:

ԱՍՏՂԻԿ.—Բա մարդ, ինչե՞ր ես ասում, յես ի՞նչ յե-
րես եմ տվել նրան: Հազար ասում եմ, իբրա-
տում. ել դրանից ալել ի՞նչ կլինի: Ժամանակ-
ներն են մեղավոր, ժամանակները...

ՄԱՐՈՒՍՅԱ.—Շատ ճիշտ ես ասում, Աստղիկ ջան,
ժամանակն ե մեղավոր... Այ, վերցնենք մեր
Աշոտի տղա Սուրբենին, դեռ մի մատը յերեխսա
յե...

Դուռը քափով բացվում ե և շեմքին յե-
րեվում ե ԽՍԽ ԱՐԿԱԴԻՉ ՍԱԳԻՆՈՎԸ:
Սոլոմոնը և Աստղիկը շուպառում են նրան ըն-
դառագ:

ՍՈԼՈՄՈՆ.—(Միասին) Համեցեք, Համեցեք, Իոսիֆ
ԱՍՏՂԻԿ.—} Արկադիչ:

ԱԱԳԻՆՈՎ.—Բարի յերեկո ճեզ:

Հանում ե վերարկուն, վորը վերցնում ե
Սոլոմոնը և կախ տալիս:

ԱԱԳԻՆՈՎ.—(Առաջանում ե, տեսմելով Մարտիսյա-
յին) Բա՛, բա՛, բա՛, բա՛, այս ո՞ւմ եմ տես-
նում... սկսյէկո լիտ, սկոյլկո դիմ, —ինչպես
ասում են ուռաները... Ոհո՛, քանի դնում ջա-
հելանում եք, սիրունանում եք, տիկին Մա-
րտիսյա:

ՄԱՐՈՒՍՅԱ.—(Կարմրում ե դեռասի կնոջ նման) Ա-
սում եք, եի, ինոսիֆ Արկադիչ... Ես ոչերեղ-
ները կթողնեն, վոր մարդ ջահելանա...

ԱԱԳԻՆՈՎ.—Զե, իսկապես ճշմարիտ եմ ասում: Ի՞նչ-

ալես և Գերասիմ Սամանիչը : Զառումն ինչպի՞ս
անցավ :

ՄԱՐՈՒՄՅԱ.—Շնորհակալ եմ, լավ ե : Գերասիմիս
գտումն հաջող անցավ : Փառք ասուուծո, այս
անգամ անցավ :

ՍՈԼՈՄՈՆ.—Աստղիկ, ժամանակն ափսոս է, ել մի ու-
շացնի, սեղան պարարասուիր :

ԱՍՏՂԻԿ.—Ի՞ն կույն : (Անցնում ե սեղան պատրաստե-
լու) Մարուսյա, ովնիր :

Մարուսյան ոգնում ե նրան սեղան պատ-
րասմելու :

ԱԱԳԻՆՈՎ.—Սոլոմոն Բագդանիչ, ասում եմ հնդորյա-
կից ել բան զուրս չեկավ, հա : Ելի մենք մեր
որս անց ենք կացնում մեր քեֆով :

ՍՈԼՈՄՈՆ.—Բաս ի՞նչ եյին կարծում : Մենակ բաղերի
ժամանակը մը քիչ լավ չե լինելու : Ուզածդ
սարդկանց ու բարեկամների հետ չպիտի կո-
րողանառ միասին համարվել գտու կամ ուշ ու-
տելու :

ԱԱԳԻՆՈՎ.—Ե՞ր, դու յել, քո տունը չինիի, ինչի՞ մա-
սին ես մտածում : Դըա հնարն ել կզոնենք :
Բակի վոր չլինի, գիշերները քեֆ կանենք :

ԱՍՏՂԻԿ.—Համեցեք խորբեմ : Եհս իս-
կույն... (Անցնում ե մյուս սենյակ և խսկույն
դուրս ե գալիս, ձեռքին խաղաթդեր : Գցում
ե սեղանի վրա, կիսաշրջան բացելով) Թեյն ել
գնեմ պրիմուսի վրա, զամ : Բայլչեվիկները
մեզ լավ ոռվորացրին չայնիկի : (Գուրս ե գը-
նում) :

ՄԱՐԳԻՆՈՒ.—Դե, նստենք : Տիկին Մարուսյա, դուք ի՞ս

դիմաց : Այս յերեկո յես ուզում եմ ամբողջ ժա-
մանակ ձեր դեմքը տեսնել իմ առաջ : (Նստում
ե) :

ՄԱՐՈՒՄՅԱ.—Ելի հինն եք, Իոսիփ Արկադիչ, չեք
փոխվել բոլորովին : (Նստում ե նրա դիմաց) :
ԱԱԳԻՆՈՎ.—Ուրիշ կերպ ել չեր կարող... Մոքներովդ
չանցկացնեք ամենելին :

ՍՈԼՈՄՈՆ.—(Նստում ե, վերցնում ե խաղաթդերը)
Տուզը բաժանում ե : (Գցում ե յուրաքանչյու-
րի տառա մի մի խաղաթուզը, մինչեվ տուզ
դուրս գալը) :

Գալիս ե Աստղիկը, նստում ե Սոլոմոն
Բագդանիչի դիմաց : Սոլոմոնը շարունակում
է խաղաթդերը գցել : Տուզը դուրս ե գալիս
Սագինովին :

ՍՈԼՈՄՈՆ.—Բարդազոր եք, Իոսիփ Արկադիչ, կանայք
սիսում են ձեզ, տուզը զուրս ե գալիս ձեզ...
ՄԱՐՈՒՄՅԱ.—Մի խոսքով վեղյուտ... (Ընդհատում ե
ինքն իրեն) :

ԱԱԳԻՆՈՎ.—Ճարունակեցեք, տիկին Մարուսյա, մի
ամաչեք... Նու, վեղյուտ կակ չորսու, այն-
պես չե՞ : Վոչինչ, համաձայն եմ, համա-
ձայն...

Ակավում ե խաղը, վորք ընթանում ե
մերը բացականչություններավ, յերք մոռյլ-
մուախոն ու կենտրոնացած :

ԱԱԳԻՆՈՎ.—Սոլոմոն Բագդանիչ, նոր անեկուոտ իմա-
ցե՞լ եք :

ՍՈԼՈՄՈՆ.—Գուցե : Վո՞քը :
ԱԱԳԻՆՈՎ.—Զե, լսած չես լինի : Բոլորովին ուսում ե .

ինչպես ասում են, կրասկան դեռ չի չորացել:
Բայց մի փոքր անհարժմար և կանանց ներկա-
յությամբ:

ՍՈԼՈՄՈՆ.—Վոչինչ, պատմիր, կանայք ավանջները
կփակեն, չեն լսի:

ՄԱՐՈՒԹՅԱՆ.—Պատմեցեք, իսսիֆ Արկադիչ, իսկ այս-
պիսի տեղերում կամաց ասացեք, մենք չենք
լսի:

ԱՍՏՂԻԿ.—Պատմեցեք, իսսիֆ Արկադիչ, խնդրում
ենք:

ԱԱԳԻՒՌՎ.—Նու, լավ: Կոռագերատիվում մեծ հերթ և
հավաքված լինում: Բոթում են միմիանց, հըս-
հրում, կողք ու վոտք տրորում: Իսկ գործա-
կատարներն ել, իրենց սովորության համա-
ձայն, մեկ այսոր են կըսում, մեկ եղուց: Հան-
կարծ հերթում կանգնածներից մեկը սաստիկ
ջղայնացած, միսում և բղավել թե սա ի՞նչ...

Պատմության ընթացքում բացվում է
կից սենյակի դուռը և յերեվում ե Ռուրիկը:
Նա մի պահ նայում է նրանց մոայլ, ապա
հանդարտ մոտենում է, վերցնում է վերար-
կուն և նույնպես հանդարտ, զնում է դեպի
դուռը:

Հայրը, վոր կիսահակված, ուշադրու-
թյամբ լսում է Սագինովին, հանկարծ բար-
ձրացնում է գլուխը և նկատում է նրան:

ՍՈԼՈՄՈՆ.—Ո՞ւր: Քեզ ասացի տանը մնա:

ՌՈՒԲԻԿ.—(Յետ է դառնում և ատելությամբ լի հա-
յացքով նայում ե նրան): Զզվելի յեք ինձ հա-
մար դուք ձեր ափսեներով, ձեր թղթախաղով,

ձեր հերթերով ու անեկդոսներով... և ձեր
ամբողջ հասկացողություններով:

Սագինովը և Մարուսյան ընդհատում են
խօսի և խաղաքղբերը ծածկվուն ձեռքե-
րով, հնագրքությամբ նայում են նրան:
Ասուղիկը շփորված կանգնում է և մնում է
ալդպիս կանգնած: Սոլոմոնի դեմքն ասու-
հանարար կատաղի տեսք է ընդգանում: Նա
ձեռքն ուժգին խփում է սեղանին ու վոտքի
ցանկում:

ՍՈԼՈՄՈՆ.—Այդպիս, հա՞: Կիրատեմ հիմա քեզ:
(Հարձակվում է Ռուրիկի վրա, բռուցվենքը
բարձրացրած, կամենալը եարվածել):

ՌՈՒԲԻԿ.—(Հանգիստ կանգնած ե, սակայն պաշտպանո-
ղական դիրք ընդունած) Չես համարձակվի:

ՍՈԼՈՄՈՆ.—Լեզուդ, լակու:

Այդ ակնեարքին կամացուկ բացվում է
դուռը և յերեվում է Շմեյի գզզված գլու-
խը:

ՇՄԵ.—Ներողություն... դուռը ծեծեցի, չլսեցիք...
Ռուրիկը տան... (Նկատելով տեսարանը, մի
պահ կորցնում է իրեն, ապա արագ բռչում է
դեպի Ռուրիկը, իր մարմնով ծածկելով նրան:
Հոր բարձրացրած ձեռքը բռլացած կախ է
ընկնում կողքին):

ՎԱՐԱԳՈՒՅՐ

Զ Ո Ր Ռ Ո Ր Դ

Կայերականությանի անցյակը և միջանցքից մի կտոր: Սենյակի դուռը բացվում է միջանցքի մեջ:

Սենյակում Հայկուշը և Գարիգը:
Գալիս և ԶԱԼՅԱՆԸ:

ԶԱԼՅԱՆ — (Չեռք և տալիս) Բարե, ընկերներ:

ՀԱՅԿՈՒՇ — Ա՛, բարե ձեզ, ընկեր Զալյան: Յե՞րբ եք վերապարձել:

ԶԱԼՅԱՆ — Այսոր:

ՀԱՅԿՈՒՇ — Ի՞նչպես անցան գործերը:

ԶԱԼՅԱՆ — Կոնտրակտացիան իրադործված և հարյուր տոկոսով:

ԳԱՐԻԳ — Դա չառ լավ է: Նշանակում ե, չուտով կիրագործենք բամբակի անկախությունը:

ԶԱԼՅԱՆ — Չեմ կառկածում: Լսեցի Շմոյի հետ փորձանք և պատահել: Ինչպե՞ս և այժմ:

ԳԱՐԻԳ — Այսոր մոտն եյի: Առողջանում և կամաց կամաց:

ՀԱՅԿՈՒՇ — (Զդայնացած) Զարմանալի տղա յե մեր Շմոյ: Մինչեվ այժմ չվարժվեց քաղաքին: Հենց իմանում ե քաղաքի փուլուներն իրենց հանդ ու լեռներն են, վոր ուր ուղենա, դնա, ինչպես ուղենա, վազ տա, կամ ցանկացած տեղը կանգնի իր համար:

ԶԱԼՅԱՆ — Մանրամասնությունները գիտե՞ք:

ԳԱՐԻԳ — Ասում ե, վոր այդ յերեկո սաստիկ ժը՝ տազբաղ անցնելիս և յեղել հատող փողոցով և չի նկատել սրբնթաց առաջացող ավտոն և նույնիսկ սուլոցը չի լսել: Իսկ յերբ սթափվել և կախիել, վոտքը սահել և ու վայր և ընկել: Շոփերն հազիվ հաջողներել և ավտոն կանգնեցնել, բայց սրունքը մնացել և տակն ու վնասվել: Իրեն փոխադրել են հիվանդանոց, իսկ շոփերին ձերբակալել են:

ՀԱՅԿՈՒՇ — Իմ կարծիքով շոփերն հանցավոր չե:

ԶԱԼՅԱՆ — Վոչ, այսուամենայնիվ շոփերը պարտավոր և բոլոր դեպքերում զգաստ մնել:

ԳԱՐԻԳ — Շմոյ ել շոփերին հանցավոր չի համարում: Յերբ իմացել ե նրան ձերբակալելու մասին, խնդրել ե ազատել, հանցանեքն ամբողջապես իր վրա վերցնելով:

ՀԱՅԿՈՒՇ — Այդ արդեն իզուր: Շոփերը պիտի նըստեր:

ԳԱՐԻԳ — Եու, չգիտեմ: Մեկ ասում ես, վոր շոփերն հանցավոր չե, մեկ ել գտնում ես, վոր պիտի նստեր: Շմոյ արդպես չի մտածել: Շոփերն ազատվելուց հետո շտապել ե Շմոյին տեսնելու: Նրանք այժմ սերտ լարելամացել են: Շոփերն ամեն որ այցելում է նրան:

ԶԱԼՅԱՆ — Այս, Շմոյին զա հատուկ է: Նրա մեջ կադաշտերի ընդարձակություն և լեռների վեհություն: Նա ինքը ընությունը լինի կարծես:

ՀԱՅԿՈՒՇ — (Արհամարհական) Պոյե՛զիա յե...

ԶԱԼՅԱՆ — (Ծիծալում ե) Բռա՛վո, Հայկուչ:

ԳԱՐԻԳ — Շմոյ ել շոփերի հետ և կապվել: Ասում ե, չառ խելոք և կայուն տղա յե:

ՀԱՅԿՈՒՇ. — Սա ի՞նչ խայտառակություն է, ինչո՞ւ
յեն ընկերներն այսչափ ուշանում:

ՀԱԼԵԱՆ. — Ուրիշ ի՞նչ կա:

ՀԱՅԿՈՒՇ. — Հակակրոնական յերեկութի պատրա-
տություններ ենք տեսնում:

ԳԱՐԻԴ. — Պիս ենք ուզում պատրաստել բայց
փորձերը զեկավարող չկա:

ՀԱԼԵԱՆ. — Այդ յես հանձն եմ առնում:

ԳԱՐԻԴ. — Իսկապէ՞ս: Հիանալի յի: Շնորհակալու-
թյուն, ընկեր Զալյան:

Ներս են գալիս յերկու հոգի և զլիով
քերելվածի բարեկելով, նատում են:

ՀԱՅԿՈՒՇ. — (Նայում ե բազի ժամացույցին) Ուշա-
նում եք, ընկերներ:

ԱՌԱՋԻՆԸ. — Ճիշտ ե, բայց ժողովից ենք դալիս:

ՀԱՅԿՈՒՇ. — Նու, լավ: Անցնենք գործի: Կոմյերիա-
րյուրոյի հերթական նիստն հայտարարում եմ
բացված: Որակարգում կան. — Ինֆորմացիոն
զեկուցում հակակրոնական յերեկութի պատ-
րաստման մասին, զեկուցող ընկեր Գարիդ:
Յերկրորդ՝ Ռուբիկ Վարազյանի դիմումը կոմ-
յերիամիության մեջ ընդունվելու մասին. Կը
զեկուցեմ յս: Յեվ ընթացիկ հարցեր: Ուրիշ
հարցեր կա՞ն: Զիան: Յես սուաջարկում եմ,
ընկերներ, յերկրորդ հարցը դարձնել առաջին:
Առարկություն չկա՞: Որակարգը հաստատ-
վում ե:

ՅԵՐԿՐՈՐԴ. — Զեվականությունները թող: Անցիր
ուղղակի զեկուցման:

ՀԱՅԿՈՒՇ. — Յես սկսում եմ: Մեր դպրոցի աշակերտ
Ռուբիկ Վարազյանը դիմում եր ներկայացրել

Կոմյերիամիության շարքերն ընդունվելու:
Բյուրոն վորոշեց նյութ հավաքել, ապա մի-
այն քննության արևել նրա դիմումը: Այդ աշ-
խատանքը բյուրոն հանձնարարեց ինձ: Եես
նյութեր և անհրաժեշտ տեղեկություններ հա-
վաքեցի: Կարծում եմ, բոլորդ ել ինձ հետ
համաձայն կլինեք, վոր Ռուբիկը մեր տեխ-
նիկումի լավագույն և պատրաստված աշա-
կերաններից մեկն եռ հասարկական աշխա-
տանքներում մեծ ակտիվություն ե հայտա-
բերել մինչեւ այժմ: Բավական ե հիշտակել
ՄՈՂՐ-ի բջիջի աշխատանքները մեր տեխնի-
կումում: Ընկեր Ռուբիկի նախագահ ընտրվե-
լուց հետո, աշակերտությունը համարյա հար-
յուր տոկոսով ընդգրկված ե ՄՈՂՐ-ի շարքե-
րում: Ապա՝ նրա յելույթը պատի թերթում
դասատու. Արտադրանի արտահայտած մտքերի
դեմ: Նա իր այդ հողվածով ցույց տվեց, վոր
Կոմյերիամիության շարքերում լինելու պատ-
րաստություն ունի: Այդ բոլորի հիման վրա,
նրան կոմյերիամիության շարքերն ընդունելու
համար պետք ե վոր արգելքներ ըլինելին, սա-
կայն...

ԳԱՐԻԴ. — (Վոր ամբողջ ժամանակ ուշադիր լսում ե,
անհանգիստ շարժում ե անում տեղում) Սա-
կայն...

Մյուսմերը նույնպես ավելի յեն լարում
ուշադրությունները:

ՀԱՅԿՈՒՇ. — (Նարունակում ե) Սակայն կան արգելք-
ներ... և... բավական շատ...: Նախ ե առաջ
—նրա ծագումը: Հայրը յեղել ե նախկին չի-

նովելիկ, ունեցել է սեփական տներ, պահել է
ծառաներ և այն: Նա իր հայացքներով միան-
գամայն ոտար ե խորհրդային իշխանության:
Ներկայումս ել վարում ե զուտ մեջանական
կյանք, հայնոյում ե կոմունիստներին և ինչ
վոր փոփոխության ե սպասում: Ռուբեկը վոչ
մի ազգեցություն չունի իր ծնողների, մանա-
վանդ հոր վրա:

ԶԱԼՅԱՆ. — Նու, այդ բանում դու շատ հեռու յես կը-
նում, Հայկուչ: Ազգեցությունն այդչափ հեշտ
բան չեւ վերցրեցիր ու ազգեցիր: Ուրախ պնտք
ե լինել, վոր Ռուբեկին ինքը չի ընկել հոր ազ-
գեցության տակ, ինչպես մեր աշակերտու-
թյան մի մասը: Ընդհակառակը, հարկավոր ե
նրան դուրս հանել այդ միջավայրից ու կապել
ավելի առողջ միջավայրի հետ:

ՀԱՅԿՈՒԾ. — Յես միանգամայն հստաձայն կլինեյի քեզ
հետ, ընկեր Զալյան, յեթի միայն դա լիներ:
Դժբախտությունը նրանումն է, վոր Ռուբեկին
ինքն ամբողջապես գտնվում է հոր ազգեցու-
թյան տակ և իր բոլոր քայլերն անում ե նրա
թելադրանքով: Նրա թե ակտիվությունը, թե
հոգվածները և թե ընդհանրապես բոլոքը — մի
ինչ վոր հետին նպատակ են վնարում

ԴԱՄԲԻԳ. — Հայկուչ, դու սխալում ես, չի կարող պա-
տահել: Յես Ռուբեկին լավ եմ ճանաչում, նա
շատ անկեղծ աղա յե:

ՀԱՅԿՈՒԾ. — Իմ ասածները գատարկ բառեր չեն: Յես
ունեմ ապացույցներ: Նրա դասընկերներից մի
քանիսը, վորոնցից մեկը նորյանիսկ նրանց տան
դրկից ե, զրավոր հաստատում են, վոր իրենք

այդ բոլորը լոել են իր իսկ բերանից: Ահա այս-
տեղ ե: (Փնտրում ե քդքերում) Գտա: Ահա:
(Նայում ե ստորագրություններին) Վահագ,
Պերճ, Սիրան:

ԴԱՐԻԳ. — Ա՛յս, նրանք են . . . Յես նրանց ասածներին
չեմ հավատում:

ՀԱՅԿՈՒԾ. — Գլուեմ, ընկեր Գարիգ: Նրանք յերեքով
ել անհարազատ են մեզ, բայց մի մոռացեք,
վոր նրանք միմիանց ավելի լավ են ճանաչում,
քան մենք: Ուրախ պետք ե լինել, վոր նրանք
իրենց գաղտնիքները բաց են անում մեր ա-
պաշ: Նրանք այդ ինդրում անդիտակցաբար
ոժանդակում են մեզ:

ԶԱԼՅԱՆ. — Նու, չնորհակալ ենք նրանց ոժանդակու-
թյունից: Հարկավոր չեւ: Այդ հարցում, Հայ-
կուչ, դու սխալում ես արդեն: Քո ասելով
դուրս ե գալիս, վոր կուսակցությունը պետք
ե նշանակություն տա նրանց ասածներին և
նույնիսկ կարծիքներին:

ՀԱՅԿՈՒԾ. — Յես այդ չասացի: Միայն նրանց կարծիք-
ներն ոգտագործելը յես գոնում եմ նպաստա-
վոր:

ԶԱԼՅԱՆ. — Այս, բայց պետք ե պարզել այն պատ-
ճառները, վորոնք հիմք են ճառայում նրանց,
ինչպես դու յես կարծում, Ռուբեկի դեմքը
պարզել մեր առաջ:

ՀԱՅԿՈՒԾ. — Յես, իհարկե, չեմ կարծում, վոր դա
լավ դիտավորությամբ ե արվում նրանց կող-
մից: Բայց այս դեպքում դա ինձ չի հետա-
քրքրում ամենելին:

ԶԱԼՅԱՆ. — Սխալ ե: Ստացվում ե մի տեսակ շաղ-

կապ ձախ և աջ թեքումների: Յերկուսն ել վը-
տանդավոր են:

ՀԱՅԿՈՒՇ.— Դա միայն զգուշություն ե: Սակայն, ըն-
կերներ, բացի գրանից, կա նաև մի ուրիշ վը-
կայություն: Ահա: (Փետրում ե քդրերամ) Ինչվոր մի Սերյոժա... (Վերցնում ե մի
բռնը) Ասեմ ընկերներ, իմ հավաքած տեղե-
կություններից պարզվեց, վոր այդ Սերյոժան
բավական լավ համարում ունեցող խորհրդա-
յին հաշվապահ ե: Ահա այդ Սերյոժան գրում
ե, վոր վերջերս իրենց տանը յեղած ընկերա-
կան փոքրիկ խնջույքի ժամանակ, Ռուբիկը
խմել-հարբել ե, սկանդալ ե սարքել, իրեն
պահել ե անվայել, խուլիքանություն ե արել
ու պարծեցել ե, վոր չուտով ինքը մտնելու յե-
կոմյերիտմիության մեջ և այն ժամանակ ինքը
դիտե ինչ կանե: Թող մի տոմսը գրապանո դը-
նեմ, —ասել ե, —յես ցույց կտամ բոլորիդ, թէ
ո՞վ եմ յես: Ահա այդպես, ընկերներ: Կար-
ծում եմ պարզ ե արդեն:

ԴԱՐԻԳ.— (Տարակուսած) Յեթե այդպես ե... Բայց
չատ զարմանալի յե... Ռւղղակի անհավատա-
լի...

ԱՌԱՋԻՆ ԱՆԴԱՄ.— Պարզ ե արդեն:

ՀԱՅԿՈՒՇ.— Ընկերներ, Կոմյերիտմիության շարքերի
Հստակությունը պահանջում ե բայլչեվիկյան
վճռականություն:

ՅԵՐԿՈՒՐԴ ԱՆԴԱՄ.— Վերջ տանք, ընկերներ: Հասկա-
նալի յե: Խնդիրն արդեն պետք ե սպառված
համարել:

ՀԱՅԿՈՒՇ.— Այս, ընկերներ, յես ել կարծում եմ,
ուետք ե խնդիրն սպառված համարել: Ես առա-
ջարկում եմ Ռուբիկ Վարազյանի...

Այդ ժամանակ միշտնցքում յերեվում ե
Ռուբիկը և ներքին ուրախությունից փայ-
լող դեմքով առաջանում ե դեպի բյուրոյի
սենյակը:

ՀԱՅԿՈՒՇ.— ... Ռուբիկ Վարազյանի դիմումը կոմյե-
րիտմիության մեջ ընդունելու մասին, մեր-
ժել, վորպես մեզ անհարազատ տարրի: Ուրիշ
առաջարկ չկա՞: Քվեարկում եմ իմ առաջար-
կը: Ո՞վ ե համաձայն: (Բարձրանում են ձեռ-
քերը):

ԶԱԼՅՈՒՆ.— Յես թեե միանում եմ, բայց առաջարկում
եմ վերջնական չհամարել:

ՀԱՅԿՈՒՇ.— Թողեք, ընկեր Զալյան, զգուշությունն
այս դեպքում տեղին չե: Առաջարկն անցնում
ե միաձայն...

Դուքը բացվում ե նեերս և մտնում Ռու-
բիկը: Մի ընդհանուր հայացք նիտելով քո-
լորի վրա, նա առաջանում ե դեպի սեղանը:

ՀԱՅԿՈՒՇ.— (Նայում ե նրան) Ի՞նչ կասեք ընկեր
Ռուբիկ:

ՌՈՒԲԻԿԻԿ.— Այսոր քննվում ե իմ դիմումը...

ՀԱՅԿՈՒՇ.— Այս: (Չոր) Սակայն կոմյերիտմիու-
թյունը ձեր տեղը չե... Սերժված ե:

ՌՈՒԲԻԿԻԿ.— (Ցնցվում ե նրա սուր խոսքերից) Այսին-
քըն... Զեմ հասկանում, ընկեր Հայկուշ:

ՀԱՅԿՈՒՇ.— Իզուր... Դու պետք ե լավ իմանայիր,
վոր քո մտադրությունները դադտնի մնալ չե-
յին կարող...

ՌՈՒԲԻԿԻԿ.— Իմ մտադրությունները... Զեմ հասկա-
նում:

ՀԱՅԿՈՒՆԾ — Այս, ձեր մտադրությունները... Նու, լավ, այդ մասին հետո, այժմ նիստ ե:
ԹՈՒԲԻԿ — Հասկանում եմ... (Հայացքը մոլոր պարում ե սենյակում մեկից-մյուսին, ապա դանդաղ դուրս ե գնում, կամացուկ ծածկելով իր յետեվից դուռը):

Սենյակում մի առժամանակ լուսթյուն ե տիրում, վորի բնիդհատում ե Հայկուշի ձայնը:

ՀԱՅԿՈՒՆԾ — Նիստը շարունակվում է: Այդպես: Որպես կարգի առաջին հարցն սպառված է: Անցնում ենք յերկրորդ հարցին: Խոսքը քեզ ե պատկանում, ընկեր Գարիգ: Զեկուցման համար տառը բողեք:

Ռուբիկը մինչ այդ դանդաղ տնօնում է միջանցքով: Մակայն նա դիո լավ չի պատկերացնում կատարվածը: Կամ ե առնում, ինչվոր լարված մտածելով: Չեռքին բռնած գլխարկի աննկատելի բնիկում ե հաստիին:

ԹՈՒԲԻԿ — Այդպես... իմ տեղը չե... Բայց ամենեւ մին չեմ հասկանում... Մակայն այնուղ եւ իմ տեղը չե... Վո՞չ, այնուղ իմ տեղը լինել չէ կարող... Այդ դեպքում ուր ե իմ տեղը:

Միջանցքով յերեվում ե Սիմոն բիճելի, ինքն իրեն փնտիր փնտիրով:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Քստեղ ժողով... ընտեղ ժողով... Կես քշեր ա համարյա, բայց դպրոցի դուռը փակած չե... (Նկատելով անշարժ կանգնած Ռուբիկին, բայց իր ուղղում ե նրա կողմը): Հը, դու յել ժողով ունես:

ԹՈՒԲԻԿ — (Նրա ձայնից սրավիվում ե) Զե՛, Սիմոն բիճա, իմ ժողովը վերջացավ:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — (Զարացած) Դե վոր վերջացավ, եւ մնալու բան չկա, գնա, արդեն կես քշեր աղառել, հըմի ուր վոր ա, դուդոկը կխփի:

ԹՈՒԲԻԿ — Ճիշտ ե Սիմոն բիճա, ուշ ե, դուդոկը կխփի:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Կխփի: Գնա տուն, վորդի: Հայրիկդ հիմի անհանդիսա լլինի:

ԹՈՒԲԻԿ — (Մեհենայորեն) Հայրիկն... Յես հայրիկ չունեմ...

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — (Կարծես կրահիլով ինչ վոր բան) Յե՞րբ պատահեց եւ զժբախտությունը, վորդի... Ճանաչում եյի, լավ մարդ եր... Գիմանազի ակտերի ժամանակ միշտ կգար... Աստված հոգին լուսավորի...

ԹՈՒԲԻԿ — (Ժպուում ե ալիսոր) Զե, Սիմոն բիճա, հայրիկս վողչ և առողջ ե:

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — (Տարակուսած) Եղ բա վո՞նց... Վոր ասես, բան չեմ հասկանում... Համ հայրիկդ սաղ ա, համ ել հայրիկ չունես... Հիմի յել կասեք, թե Սիմոն բիճեն չին բաներն ա միշտ միտ բերում... Բա զե առաջ ո՞վ եր իմացել եղ անսակ բաներ...

ԹՈՒԲԻԿ — Կպատահի, Սիմոն բիճա... Պատահում ե, վոր մարդ հայր ունի, բայց հայր չունի.... Տուն ունի, բայց տուն չունի, ինչպես հիմի յես... Ե՛հ, գնամ: Բարի գիշեր, Սիմոն բիժա; մի նեղացիք: (Բայլ ե անում զմալու):

ՍԻՄՈՆ ԲԻՋԱ. — Սպասի: Եղ ինչե՞ր ես ասում, վո՞նց թե տուն չունես:

ՌՈՒԲԻԿ.— Պատահում ե, Սիմոն բիծա: Բարի գիշեր:
ՄԻՄՈՆ ԲԻՉԱԼ.— Կաց ասում եմ: Ես ցուրտ-սառնաս
մանիքին բա ո՞ւր ես դնում:

ՌՈՒԲԻԿ.— Ցուրտը լավ ե հիմի ինձ համար... Կէռ-
վացնի....

ՄԻՄՈՆ ԲԻՉԱԼ.— Հիմար-հիմար մի խոսա: Արի զը-
նանք իմ ոթալլ: Յես ու պառավն ենք, մի
հնարքով յոլա կերթանք, մինչեվ եկուց մի
բան կանես:

ՌՈՒԲԻԿ.— Շնորհակալ եմ, Սիմոն բիծա: Քնելու տեղ
ունեմ, քեզ նեղություն չեմ տա: (Գնում ե):

Սիմոն բիճն կանգնում ե տարակու-
սած, ապա քայլ ե անում նրա յետեվից:

Վոտքը կաչում ե գլխարկին: Կռանում ե,
բարձրացնում, շտապ նայն ե տալիս:

ՄԻՄՈՆ ԲԻՉԱԼ.— Վորդի, զլամարդ....

ՌՈՒԲԻԿ.— (Նոր միայն զգում ե, վոր գլխարկը գլխին
չե: Վերադառնում ե, վերցնում ե նրա ձեռ-
քից, ծածկում ե) Բարի գիշեր: (Շուազ գը-
սում ե):

ՄԻՄՈՆ ԲԻՉԱԼ.— (Կանգնած ե ամշարժ, նայում ե նրա
յետեվից, ապա քրբննում ե ինքն իրեն) Ա-
սում են մի փնթփնթա, Սիմոն բիծա: Դե արի
ու մի փնթփնթա... Վոչ հորն ես հասկա-
նում... Վոչ ել տղից ես գլուխ հանում....
Ենթոք տղա յա, հերն ել ժամանակին պատվով
մարդ... Դե արի ու հասկացի դրանց... Զե,
գործում, վոնց յերեղում ա, շատ եմ պառա-
վել, գժար եմ զլսի ընկնում աշխարհի բա-
ները...

ՎԱՐՍԴՈՒՅՑ

Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ

Դասարան դահլիճին կից: Մի ամեյու-
նում և լուսամուտի զոգում դրված են զա-
նազան լարային և փողային նվազելու գոր-
ծիքներ: Նստարանների վրա փոփած են նոր
գրված պլակատներ: Մի այլ նստարանի վրա
խառնիխուն նետված են վերարկուներ: Նստարանների առջեվ՝ սեղամ, վրան մուրճ
և մեխներ:

Շարունակ մուտք ու յելք են անում ա-
շակերտ-աշակերտուիիներ: — Խանում են,
քերում են զանազան իրեր:

Սենյակն ունի մի դուռ միջամցի: Կող-
մից և մի դուռ՝ մեջտեղում, դեպի դահլի-
ճի բեմը: Դռան մի փեղկը բաց ե և առա-
ջը մի արկդ ե գրած, վորի վրայով բար-
ձրացնում իշնում են մասնակցողները:

Դասարանում գտնվում ե միայն եղիկը.
Վորը կանգնած մեծ քմբուկի մոտ, ձեռքով
շփում, յերբեմնակի խփում ե և ձայնից
իրնվում ե: Նա ըմբիանքափս խիստ վոգե-
վորված ե և ուրախ տրամադրության մեջ ե:
ԵԴԻԿ.— (Ծերեւլակի խփում ե քմբուկին) Մուզիկը կը
թնդա, բարաբանն եսպես կդղրդա ու յես
թուրս հանած, ձայն կտամ: — ընկերներ, ա-
ռաջ, թշնամու վրա... շրջապատել... լավ

կլինի շատ... թշնամուն կհաղթենք... Անզայ-
ման կհաղթենք... Հետո նրանց զերի բռնած,
կբերենք Սավարկոյ... Իսկ հետո... հետո
յել յեռ կդնամ ուսումն շարունակելու...

Թեմի կողմի բռնից իշխում ե Հայկուշը:
Նա հուզված է, խառնվել է, չգիտ վորից
սկսել: Զդային է, մազերը զզզզված:

ՀԱՅԿՈՒՇ — (Նկատելով նդիկին քմրուկի հետ խա-
ղալիս) Այդ ի՞նչ ես անում, չեմ ասե՞լ, ձեռք
չսաք: Կապառվի, ւե արի պատասխան առոր:
Հայդա: Գնա զահիճ տղաներին ողնիք:

Եղիկը դուրս ե զնում զեպի միջանց: Հայիրշը մոօւենու և պլակատներին, ոսու-
զու և ե, արյուն չարացել են: Այս ուզու
ե հավաքել, քայլ կանգ ե անում անորշ:

ՀԱՅԿՈՒՇ — Են անպիտան Շմոն ել ժամանակ գոտպ
ավտոմոբիլի տակ ընկնելու: Ավտոյի տակ վոր
ընկած ըլիներ, այժմ ամեն բան պատրաստ
կլիներ: Շատ զոշաղ տղայ յե: (Տեսնելով, վոր
կանգնելով բան դուրս չի գա, հավաքում ե
պլակատները, մոտենում է սեղանին, վերցնե-
լու մուրթը և մեխերը):

Ներս ե գալիս Զալյանը:

ՀԱՅԿՈՒՇ — (Հարձակվում ե նրա վրա) Այս ո՞ւր եք,
յես մենակ ի՞նչ կարող եմ անել: Ո՞ւր են
ժյուսները:

ՀԱԼԵԱՆ — Հանգիստ, ընկեր Հայկուշ, ամեն ինչ իր
ժամանակին կլինի. հանգստացիր:

ՀԱՅԿՈՒՇ — Կլինի... Հասարակությունն արգեն հա-
վաքվում ե, իսկ դահլիճը զեռ պատրաստ չե:
Նրանց ներկայությունը հո չհ՞նք զարդարելու:

ՀԱԼԵԱՆ — Վոչինչ, թեկուզ և նրանց ներկայու-
թյամբ: Ավելի լավ կլինի, նրանք ել կողնեւ
մեզ:

ՀԱՅԿՈՒՇ — Մաղրում ես, ինչ:

ՀԱԼԵԱՆ — Ամենելին: Ճշմարիտ եմ ասում, ավելի
լավ կլինի: Այսպես ասած, կոնտակտ դահլիճի
և բնմի մեջ:

ՀԱՅԿՈՒՇ — Նու, լավ: Վերցրեք պլակատները և խը-
փեք պատերին: Վերցրեք: Ահա մեխերը և
մուրճը: Այստեղ տղաներ կան, կանչեցեք ող-
ոնելու: (Տալիս ե պլակատները, մեխերը և
մուրճը):

ՀԱԼԵԱՆ — (Այդ ամենը ձեռքին բռնած, նայում ե նը-
րան ու ընկերական ներդամարյանք ժբայ-
տում ե) Լավ:

ՀԱՅԿՈՒՇ — Ի՞նչ եք նայում ինձ այդպես ու ժպտում:
Դե զնացեք:

ՀԱԼԵԱՆ — (Ծիծաղում ե) Գնում եմ: Լավ հրամա-
նատար կլինիք, աղնիվ խոսք: Տղաները ճիշտ
են նկատել:

ՀԱՅԿՈՒՇ — Դե, դե, կո... (հանկարծ զգալով, վոր
ընկերական մտերմարյունն այս դեպքում այն-
քան ել տեղին չե, ընդհանում ե, կարմր-
լով):

ՀԱԼԵԱՆ — (Ըմբռնելով նրա դրությունը) Բոավո,
աղնիվ խոսք, բառլու: Վոչինչ, վոչինչ, ա-
զգայ յեղիք: Դե, զնացիք: (Գնում ե, թիմ տա-
նող դռնով):

ՀԱՅԿՈՒՇ — (Հանկարծ հիշելով) Թու, դրողը տանի,
մեկը գլուխ ես բերում, մյուսն ե մնում:
Ծրագիրը, ծրագիրը չի կազմած: (Ծայթ ե տա-

լիս) Եղիկ, Եղիկ: (Թիմի կողմի դռնից վագե-
րակ ցած և քոչում Եղիկը) Եղիկ, վազ տուր
Դարեփին գտիր, ասա թող ծրագիրը կաղմի:
Հասկացա՞ր: Ասա շուր անի: Բայց չե, սպա-
սիր ինքս գնամ: Հարկավոր և կարգը փոխել:
Խուրիկը պիտի զեկուցեր, բայց նա յել քանի
որ և չի յերեվում, մեջտեղում չկա: Նրան եւ
ինչ և պատահել, չեմ հասկանում: Հարկավոր
և ուրիշի հանձնարարել: Տեսնենք ո՞վ հանձն
կառնի: (Շտապ դուրս և գնում):

Եղիկը մնում է միայնակ: Կրկին մոտե-
նում և քմբուկին և սկսում է մատներով կա-
մացուկ քմբկահարել:

Դուռը բացվում է և յերեվում է Արամի
գլուխը: Եղիկը քմբուկով գրաղված, չի նը-
կառում նրան:

ԱՐԱՄ. — (Զայն և տալիս) Եղիկ:

ԵԴԻԿ. — (Նրա ճայնից համեստակի գալով, ցնցվում
եւ և մատներն ավելի ուժգին են կայչում քըմ-
բուկին, վորի բարձր բումբյունից նա ավելի
վախեցած, յետ ե ընկրկում, սակայն նկատե-
լով Արամին, հանգուանում է և ժպտում):

ԱՐԱՄ. — Մենա՞կ ես:

ԵԴԻԿ. — Արի, Արամ, տես ինչ լավ բարարան ե...
Եես իմ գորամասում անպայման այսպիսի բա-
րարան կունենամ:

ԱՐԱՄ. — (Մոտենում է, դիտում է) Ճիշտ ե, լավ բա-
րարան ե: (Համեստ ուրախ վոգեվորու-
թյամբ) Եղիկ, կարող ես ինձ շնորհավորել:
Արդեն վորոշված ե: Եես արակտորիստ եմ
դառնում: Հայրո Համաձայն ե: Միայն գրում

ե, վոր հարկավոր ե առաջ զպրոցն ավտրտել:
ԵԴԻԿ. — Իհարկե տրակտորիստն ել պիտի լավ ուսում
ունենա:

ԱՐԱՄ. — Ամառն ել աշխատելու յեմ կոլխոզում:
Բեմի յետեկ ձայն. «ՏՂԵՐՔ, ՈՎԿ
ԿԱ ԱՅԴՏԵՂ, ՅԵԿԵՔ ԱՅՍՏԵՂ, ՈԴՆԵ-
ՑԵՔ»:

Եղիկը և Արամը վագելով դուրս են գը-
նում քեմ տանող դունով:

Բեմը մի առ ժամանակ դատարկ է:

Հանդարտ քայլերով գալիս և Ռուրիկը:
Նրա դիմքը գումառ է: Նայում և սեղակում
յեղած իրերին, սպա մոտենաւմ և սեղանին
ու հոսում մատի արողին:

Բեմի յետեկից հեջում և աշխատող ա-
շակերտների ուրախ բացականչությունները
ու խոսակցությունները: Ռուրիկի դիմքը
փայլում և անցողիկ մի ժայտով:

ՌՈՒՐԻԿ. — Աշխատում են... Ուրախ են... Զարդա-
րում են գահլիքը... ինչ լավ ե... Գնամ յես
ել... (Ուգում և կարծեք տեղից յելնել, բայց
շարժումը մնում է անգործադրելի): Իսկ յեթ
չընդունե՞ն...

Տիրում և լուրջում:

Դուռը քափով բացվում է և եենակի
ոգմությամբ ցատկուելով, ներս և ընկնում
Շմեն: Նա սասակի ուրախ է: Ժպտում ե:

ՅՄՈ. — Եեկա: ՀԵ՞ ո՞վ կա այստեղ: Ո՞ւր եք կորել:
ՄԻԿԵԼ Ե.՝ (Նկատելով սեղանին հակլած
Ռուրիկին, բացականչում և ուրախ) ՌՈՒՐԻԿ:
(Յատկանելով հենակի ոգնությամբ, հասնում
է նրան):

ԱՌԻՔԻԿ.— (Նրա ձայնից ցնցվելով, բարձրացնում է գլուխը և տեսնելով նրան ժպառմ ե) Շմո՛:

Նմոն հասնում ե թրան, զրկում ե: Համար քորվում են:

ՇՄՈ.— ՅԵԼԿԱ: Ազատվեցի: Ասում եմ, ընկերներ, թողեք գնամ, այս յերեկո յես պետք ե դպրոցում լինեմ, մենք պետք են այս գիշեր ծնունդի հերը անիծենք, դուրս դրեցեք ինձ: Նրանք թե՝ անկարելի յե, դեռ մի չորս-հինգ որ ել պիտի մնաս: Ասում եմ հասկացեք, չի լինի, յես պետք ե այնտեղ լինեմ, յես պետք ե իմ ընկերների հետ լինեմ... Նրանք ելի իրենցն են շարունակում:— չի կարելի, վոր չի կարելի: Դե լավ, ասում եմ, վոր այդպես ե, յես ել կփախչեմ: Այն ժամանակ դուք պատասխանատու չեք լինի, կասեք փախսավ: Նրանք ե այսպես, և այնպես,— թե վոտքդ գեռ լավ չի կրպել, կարող ե հետեւանքը վատ լինել, կարող ես կաղ մնալ: Բայց յես շարունակ իմն եմ կրկնում:— չե վոր չե, պիտի դնամ: Թող կաղ մնամ, ասում եմ, միենույն ե, կաղ-կաղ ել կարող եմ չորանություն անել, այծերի հախից զալ: Վերջը տեսան հնար չկա, յես իսկապես կարող եմ փախչել, բերեցին այս հենակը, թե դե լավ, այս գիշեր գնա, բայց վաղը կրկին վերադարձիր, մինչեվ վատքդ բոլորովին առողջանա: Այդպես ել համաձայնություն կնքեցինք: ՅԵԼԿԱ: Դու ի՞նչ ես նստել այստեղ, վերկաց գնանք այնտեղ, տեսնենք ի՞նչ են անում... (Համկարծ ըթիհատում ե ինքն իրեն) Սպասիր, ինչո՞ւ յես այդպես

ԹԹՎԱԾ: Հիվանդ Հո չե՞ս: Դե խոսք առա յե, ի՞նչ ես լեզուդ կուլ տվել: Ի՞նչ ե պատահել: (Ցնցում ե մրան):

ԱՌԻՔԻԿ.— Վոչինչ, Շմո:

ՇՄՈ.— Հա, դե վոր վոչինչ, զնանք: Դե ի՞նչ ես նըստել, վեր կաց:

ԱՌԻՔԻԿ.— Զե, Շմո: Յես այնտեղ չեմ գա:

ՇՄՈ.— (Սպատիկ զարմացած) Ինչո՞ւ:

ԱՌԻՔԻԿ.— (Հազիկ լսելի) Նրանք կարող են ինձ դուրս անել:

ՇՄՈ.— (Ապշանեցից մի քայլ յետ և գնում) Ի՞նչ...

ԱՌԻՔԻԿ.— Յես ձեր շարքում լինել չեմ կարող:

ՇՄՈ.— (Ավելի յեկա ապշած մրտ խոսքերից) Զեմ հասկանում, ասոված վկա, չեմ հասկանում: Ախր ինչո՞ւ:

ԱՌԻՔԻԿ.— Դիմումս մերժեցին:

ՇՄՈ.— Մերժեցի՞ն...

ԱՌԻՔԻԿ.— Գտան, վոր յես անհարազատ եմ:

ՇՄՈ.— (Նոր միայն ըմբռնելով բանի եյուք յունը) Սպասիր, սպասիր: Բյուրոն քննեց գիմումդ:

ԱՌԻՔԻԿ.— Բնեց և գտալ, վոր կոմյերիտմիության շարքերն իմ տեղը չե:

ՇՄՈ.— (Սպատիկ բարկացած) Թո՛ւ, յես ձեր ինչը առեմ... այսպես ել սխալվել... Ախր ասում եյի տղին կուտեն... Սպասիր, խելոք գլուխի, հապա ինչո՞ւ մինչեվ հիմի այդ մասին ինձ չես ասել:

ԱՌԻՔԻԿ.— Ի՞նչ ասեյի, վոր հիվանդ եյիր:

ՇՄՈ.— Ի՞նչ ասեյի... Դիմե՞լ ես ուայկոմ:

ԱՌԻՔԻԿ.— Վոչ: Ի՞նչ կարիք կա ինձանով զբաղեցնել:

ԵՄՈՒ — Վոչ ու... ի՞նչ եմ ասել քեզ, հը... ծ՞լի հը-
պարտությունդ բռնել ե: Հաղար ասել եմ,
թող այդ հիմար սովորությունդ: Այստեղ հը-
պարտության բան չկա: Անձնականի խնդիր չե:
Այստեղ ընդհանուր գործի հարց ե և վոչ թե
քո անհատական գործը: (Հանկարծ մի բան
վարոշելով): Վո՞րոնել են նրանք, յես հիմի
կպարզեմ: Տակն ու վրա կանեմ, քար ու քանդ
կանեմ: Դու այստեղ պատասիր: Տես չդնաս, յես
շուտով կվերադառնամ: (Հենակը թխկը ըխ-
կացնելով հապակին, շուտով ուզում ե դուրս
գնալ):

ՌՈՒԻԲԻԿ — (Վախեցած) Հարկավոր չե՛, Շմո՞:
ԾՄՈ — Քո բանը չե: Սպասիր ասեցի: (Դուրս ե վա-
գում):

Ռուրիկը, տրտում մի ժպիտ շորքե-
րին, նայում ե նրա յետեվից, ապա մարում
ե ժպիոր ու նա կրկին կախ ե զցում գը-
լուխը:

Ներս եմ զալիս Վահագը և Սիրանը:
ՎԱՀԱԳ — Ե՛, ինչո՞ւ յեկանք այտեղ: Այստեղ հետա-
քրքիր չե, գնանք դաշլիճ: Տեսնենք ինչպես
են աշխատում մեր ակտիվիտետները: (Նկատե-
լով սեղանի մոտ կժամ Ռուրիկին) Ա՛, հար-
ջանքներս ապագա կոմյերիտականին:

ՌՈՒԻԲԻԿ — (Նայում ե նրան, գումառվում ե: Վոչինչ
չի պատասխանում):

ՍԻՐԱՆ — (Նայում ե նրան, լուր, ապա շուր ե զալիս
դեպի Վահագը) Գնանք:

Վահագը և Սիրանը ուզում են դուրս
գնալ:

ՌՈՒԻԲԻԿ — (Կիսաբարձրանում ե տեղում, ուզում ե
կարծես վազել նրանց յետեվից) Սիրան:

ՍԻՐԱՆ — (Դառնում ե դեպի նա, ծաղրական) Ի՞նչ
եք հրամայում, ընկեր ակտիվիստ:

ՌՈՒԻԲԻԿ — Ի՞նչ ե պատահել, Սիրան, չես ուզում
հետո ե՞լ խոսել:

ՍԻՐԱՆ — Ի՞նչ պիտի պատահի, ընկեր կոմունու...

ՌՈՒԻԲԻԿ — Այդպէս...

ՍԻՐԱՆ — Այս, արդպես: Դու հաջրեցող ես, խուլի-
գան ես... Յերեկի մոռացել ես:

ՌՈՒԻԲԻԿ — Յե՞ս... խուլիգան... Ճշմարիտ ե, չես
այն որ մի փոքր հարբել եյի... Առաջին ան-
գամ եյի գինի խմառմ... Սովոր չեմ յես դինի
խմելու: Խմեցի այն ել, վորովհետև շատ ըս-
տիալեցիք:

ՍԻՐԱՆ — Ուրիշներին հավատացրու:

ՌՈՒԻԲԻԿ — Ազնիկ խոսք, Սիրան:

ՎԱՀԱԳ — Գնանք, Սիրան:

ՍԻՐԱՆ — Գնանք: (Քայլ ե անում դեպի նախասենյակ
տանող դռուր):

ՌՈՒԻԲԻԿ — Սպասիր, Սիրան: Ճշմարիտ եմ ասում:

ՍԻՐԱՆ — Յես խուլիգանների հետ գործ չունեմ:
(Շուր ե զալիս դեպի Վահագի կողմը):

Վահագը և Սիրանը զնում են դեսի
դռուր: Վահագը բաց ե անում դռուր դռուր
յելնելու: Այն կողմից, եենակի վրա ցատ-
կառելով, զալիս ե Նմոն, քարշ տալով իր
յետեվից Գարիգին և բյուրոյի յերկու
ամբարմներին: Տեսնելով Վահագին և Սիրա-
նին, բաց ե քողում նրանց ոճիքը:

ԾՄՈ — Ա՛, այդ գո՞ւք եք... Շատ լավ ե... Յես հենց
69

Ճեզ եյի ուզում : Ո՞ւր եք շատավում : Թարեհաւ-
չեցեք մ' վուքը սպասել : Սպասեք, ասում եմ,
այդպիս չուտ ձեռքից սպասողը չեք :
(Ներս և հրում նրանց և ներս և մոնում իմքը .
կանչելով ընկերներին) Տղերք, դուռը պինդ
ծածկեք, թե չե սրանք կթռչեն : Ասենք, մին-
նույն և (դառնալով նրանց), կրոնեմ, չեք
փախչի :

ԳԱՐԻԳ — Շմո, թող նրանց, հետո : Արգեն ամէն ինչ
պարզ ե :

ՇՄՈ — Զե, թող իրենք իրենց բերանով ասեն բոլորի
ներկայությամբ : (Գառնալով նուրիկին) ի-
մացայամեն ինչ խմացա : Այ, և հերոսներն են,
սրանք, Պերճը և մեկ ել Սերյոժան... Սրանք
են մատերիալ տվել քեզ վրա... Սրանք են
բոլոր ստերը հնարել քո մասին. իսկ մեր խե-
լոքներն ել հալած յուզի տեղ են ընդունել :

Բեմի կաղմից իշխում և Զալյանը :

ԶԱԼՅԱՆ — Պատրաստ ե : Բարեվ, ընկերներ : Վա՞,
Շմո, վե՞ր ես կացել : (Նկատելով նուրիկին)
Բարեւ, նուրիկ, այս ո՞ւր ես, չիս յերեվում :

ՇՄՈ — Սպասիր, ընկեր Զալյան, այդ բոլորը
հետո : Հիմի դեռ ուրիշ գործ կա : (Գառնա-
լով վահագին և Սիրանին) Դե, այժմ ասեք,
այդ ի՞նչ նպատակով և նուրիկը կոմյերխո-
միության մեջ մտնում : (Գառնալով Սիրանին)
Դու նրանց հարեվան ես, ասու թե ինչպե՞ս
և հայրը սովորեցրել նրան, ի՞նչ և սովորեց-
րել... (Գառնալով բոլորին) Սա ի՞նչ բան ե,
տղերք, դուք այդ ի՞նչպես եք քննել, ինչպե՞ս
չդիտեք, վոր նուրիկը հոր տանից հեռացել

ե, վոր հայրը նրան քիչ եր մնում ծեծի, վոր
նրան տանից դուրս ե արել : Այ, և վոտքս
հենց այդ որն ե կոտրվել : Ե, ինչպե՞ս եք անում,
ընկերներ... Ասում եք խմել ե... խուլիսա-
նություն և արել... (Գառնալով Սիրանին)
Պատմիր, ինչպե՞ս ես խարել, ինչպե՞ս ես
նուրիկին տարել Պերճի բարեկամի տուն,
ինչպե՞ս խմացրել եք նրան ու հետո յել տա-
նից գուրս գցել վողոց : Դե պատմիր ե... սո-
խակ ու վարդ....

Ռուրիկը, վոր սկզբում տարակուսած ե
ու զարմացած, հասկածում և կատարված և
անզիտակարպ վոտքի յև յելուում ու կար-
ծես դեռևս չհավատալով իր լսածներին, նա-
յում և Վահագին ու Սիրանին, վարնիք ա-
մաքահար, կուչ են յեկել :

ՌՈՒՐԻԿ — Ճի՞շտ ե, Սիրան :

ՍԻՐԱՆ — (Լացակումած) Եսս մեղավոր չեմ... Եսս
ինձ... Սրանք են... Վահագը և Պերճը...
Նրանք եյին ինձ սովորեցնում...

ՌՈՒՐԻԿ — Իսկ յես ձեզ ինձ ընկեր եյի համարում...

ՇՄՈ — (Հաղթական) Լսեցի՞ք, ընկերներ :

ԶԱԼՅԱՆ — Արգեն հասկանալի յե : Սիսալվել ենք,
ընկերներ... Նու, խնդիրը լուծված ե : Նրանց
արարքը կքննենք վաղը, ընդհանուր ժողո-
վում : (Սիրանին և Վահագին) Դուք գնացեք :
(Մատենում ե նուրիկին) Եսս չեյի կասկածում
քո անկեղծության : Դե, ինչ յեղել ե, յեղել ե:
(Բնեում ե նրա ձեռքը, ամուր բորբում ե) :

Ռուրիկի դեմքը պարզվաւմ ե, լայն ժախտ
և փայլում դիմիքին : Գարիզը և Շմոն պը-
71

տույտ-պառայտ եմ անում մրա չորս բոլոր-
քը: Շմն իր բուռն ուրախությունը արտա-
հայտում է հենակի վրա բռչկոտալով:

Առժիթիկ — Ընկերներ... (Նրա ձայնը խղզում ե) ու-
րեմն յես... (Աչքներին փայլուն են յերջամկու-
թյան արցունիներ) Ուրեմն յես ձեզ ՀԵ՞տ
եմ...

Գլորիֆ — Իհարկե, իհարկե, դու միշտ մեղ հետ ես
յեզել:

Սիրանը և Վահագը անմիտունի դուրս
են գնում:

Բեմի կողմի դոնից ցած ե քոչում Հայ-
կուշը:

ՀԱՅԿՈՒՇ — Ընկերներ, սկսում ենք: Դահլիճն ար-
դեն անհանգստանում է: (Տեսնելով Շմոյին)
Ե՞լ, չորսն, վի՞ր ևս կացել հա՞:

ՇՄՈՒ — Իմ մասին հետո:

ՀԱԼՅԱՆ — Հայկուշ, Ռուբիկի մասին մենք սխալվել
ենք:

ՀԱՅԿՈՒՇ — (Տեսնելով Ռուբիկին) Բարե, Ռուբիկ:
Ի՞նչն ենք սխալվել: Հատա մատերիա՞լը...

Գլորիֆ — Մատերիա՞լը... Մատերիալը կեղծ է յե-
ղել... Յես առում եյլ...

ՀԱՅԿՈՒՇ — (Գարիգին) Յես առում եյլ... Դու վա-
չինչ եւ չեյիր ասում: Ասում եք ուրեմն կե՞զծ
ե: Ուրեմն սրիկայությո՞ւն են արել... Յուշ, լավ:
Հարցը լուծված է: Յես առարկություն չու-
նեմ: (Զեսքը պարզում է Ռուբիկին) Սխալվե՞լ
ենք: Սխալը հարկամոր է ուղղել: Թաթդ տուր:
(Ռուբիկը պարզում է ձեսքը) Դե, գնացինք:
Սկսում ենք:

Հայկուշը դուրս է գնում բեմի կողմի
դունով:
Լարված և սպասողական դրություն:

ՀԱՅԿՈՒՇԻ ԶԱՅՆԼ ԲԵՄԻ ՀԵՏԵՎԼԻՑ — Ընկերներ,
Ճննդյան տոնի փոխարեն մեր կազմակերպած
հակակրոնական յերեկույթը հայտարարում են
բացված: Քրիստոսի լեզենդի մասին...

Շմն անհանգիստ վագում ե դեպի բեմ
տանող դուռը:

ՀԱՅԿՈՒՇԻ ԶԱՅՆԼ — ... կղեկուցի...
Շմն անգիտակցարար բարձրացնում ե հե-
նակը և անհանգիստ բափահարում ե ողի
մեջ:

ՀԱՅԿՈՒՇԻ ԶԱՅՆԼ — ... կղեկուցի կոմյերիտական
Ռուբիկ Վարազյանը...

Ռուբիկը ցնցվում է, դեմքը փայլում է,
վագում ե դեպի դուռը: Շմն ուրախու-
թյունից խենքի պես բռչկոտում ե ու ծափ
տալիս: Ոգնում ե հուզված Ռուբիկին բարձ-
րանալու արկդի վրայով դեպի բեմ:

Գլորիֆ — Ռուբիկ, լավ հուփ տուր: Սուրբ կույսին
չմոռանաս:

ԴՐԻՖԻԿ — Զեմ մոռանա, հանգիստ յեղիր: Մահմեդին
եւ եմ խառնելու: (Անցնում ե բեմ):

Գլորիֆ — (Նրա յետիկից) Խառնիր, Խառնիր: Մի լավ
դաս տուր նրանց, վոր զուր տեղը մարդկանց
միոր չպլոտուն:

Բեմի յետեվ ծափահարություններ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0372212

58413

ԳԻՒԸ 60 ԿՈՊ.

ԱՐՄ. ՏԵՐ-ՕՎՆԱՆՅԱ
ПУТИ
ГИЗ ССРА 1932 ЭРИВАНЬ

891.542-2
3-44